ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ‹‹ԶԱՋՈՒՌ ԿԱՅԱՐԱՆԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ›› ՊՈԱԿ-ի

2023-2028թթ.

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Ընդհանուր դրույթներ----------4

Ուսումնական հաստատության գործունեությունը
Կրթական կարիքների նկարագրությունը----------5

Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին և հնարավորություններին----------7

Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին----------10

Իրավիճակի վերլուծություն. Ուժեղ և թույլ կողմեր
Նպատակների և խնդիրների սահմանում
Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններն ու միջոցառումները----------12

Ներդպրոցական վերահսկողություն----------49

Դպրոցի տնօրենի գործունեության հիմնական սկզբունքները , կադրային քաղաքականությունը----------51

Դպրոցի հիմնախնդիրների լուծում---------- -- ----------53

Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում---------- 54
Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավում---------- 58

Աշխատանք մանկավարժական համակազմի հետ---------- 59

Դպրոցի հիմնական խնդիրների լուծման ուղիները, պատասխանատուներն ու կատարման ժամանակացույցը----------61

Ուսումնական հատատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները---------- 63

Զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցությանն ուղղված գործողություններ----------69

Զարգացման ծրագրի իրականացման գործընթացի համար անհրաժեշտ միջոցները նյութատեխնիկական պարագաները----------72

Դպրոցի զարգացման ծրագրից ակնկալվող արդյունքները---------- 74

Զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները----------75

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հասարակությունների գլխավոր խնդիրներից մեկը դարձել է կայուն զարգացումը, իսկ դրան հասնելու ճանապարհին փոփոխությունների վճռորոշ գործոնը կրթությունն է: Կրթությունը՝ հանուն կայուն զարգացման դարձել է արդի կրթական համակարգերի բարեփոխման գլխավոր ուղենիշը: 21-րդ դարում փոխվել են հասարակության արժեքային կողմնորոշիչները, կրթության և դաստիարակության համակարգը վերաիմաստավորել է իր գերակայությունները՝ շեշտը դնելով «մարդկային գործոնի» և անձի զարգացման հիմնախնդիրների վրա: Որպես բարձրագույն արժեք է դիտարկվում ազատ, կրթված, զարգացած անհատը, որն ընդունակ է ապրել ու ստեղծագործել հարափոփոխ աշխարհում, լինել մրցունակ, ինտեգրվել համաշխարհային հանրության մեջ:

Արդի հասարակության մեջ ներկայումս ընթացող քաղաքական, տնտեսական, մշակութային փոփոխությունները մեծ ազդեցություն են ունենում կրթության վրա: Կրթական համակարգի անընդհատ կատարելագործման նախադրյալներից մեկը հասարակական մարտահրավերներին և համաշխարհային զարգացումներին ժամանակին արձագանքելն է:

Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության, ցանկացած ինֆորմացիայի արագ հասանելիության շնորհիվ, աշխարհի որևէ ծայրում ստեղծված գիտելիքն արագորեն տեղայնացվում է աշխարհի մեկ այլ անկյունում: Այժմ, առավել քան երբևէ, նորարարությունն ու ստեղծագործականությունը մրցունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոններ են՝ թե՛ անհատական, թե՛ ներպետական և թե՛ համաշխարհային մակարդակներում:

Կրթությունն այն ճանապարհն է, որը հնարավորություն է ստեղծում անձի մեջ բացահայտելու նոր որակներ և կարողունակություններ: Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում հանրակրթական դպրոցի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ: Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ է: Դպրոցի զարգացման ծրագրի հիման վրա պլանավորվում է աշխատանքը դպրոցում՝ապահովելով դպրոցի 5 տարվա զարգազման տեսլականը:

Հանրակրթության համակարգում կարևոր օղակ է տարրական դպրոցը, որի նպատակը կրտսեր դպրոցականների մտավոր, հոգեկան գործընթացների,

ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության զարգացումն է, հայեցի հոգեկերտվածքի և արժեհամակարգի ձևավորումը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

‹‹Ջաջուռ կայարանի տարրական դպրոց›› ՊՈԱԿ-ի առաջիկա հինգ տարիների զարգացման ծրագիրը կազմվել է հանրակրթության ոլորտը կանոնակարգող հետևյալ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.

Հայաստանի Հանրապետության «Սահմանադրություն», «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերով

ՀՀ Կառավարության սահմանած «Հանրակրթության պետական չափորոշչի» դրույթներով

ՀՀ կրթության զարգացման մինչև 2030 թվականների պետական ծրագիրը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի սեպտեմբերի 30-ի N 35-Ն հրամանի՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներով ու ձևաչափով:

Հաստատության աշակերտների համար ստեղծվելու են բոլոր հնարավորությունները՝ իրականացնելու ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով երաշխավորված կրթության իրենց իրավունքը:

«Ջաջուռ կայարանի տարրական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028թթ. ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել հաստատության մանկավարժական, ծնողական խորհուրդների առաջարկությունները:

‹‹Ջաջուռ կայարանի տարրական դպրոց›› ՊՈԱԿ-ի Զարգացման 2023-2028 թթ. ծրագիրը մշակվել է հաշվի առնելով Ախուրյան համայնքի Ջաջուռավան գյուղի և դպրոցի առանձնահատկությունները:

Կրթական կարիքների նկարագրությունը.

Առաքելությունը այն ընդհանրացված արդյունքներն են, որոնց ձգտում է հասնել հաստատությունը.

1. Ապահովել կրթական այնպիսի միջավայր, որը կնպաստի կրտսեր դպրոցականի անձի զարգացմանն ու արժեհամակարգի ձևավորմանը
2. սովորեցնել սովորել, աջակցել ազգային և համամարդկային արժեքների ձեռքբերմանը, նախապատրաստել կրթության հետագա օղակներում ուսումնառությունը շարունակելուն:
3. ազատ շփման և հաղորդակցման հմտությունների զարգացում
4. Ստեղծել այնպիսի կրթադաստիարակչական միջավայր, որը կապահովի սովորողների ներդաշնակ զարգացում
5. ԿԱՊԿՈՒ աշակերտի համար իր զարգացման առանձնահատկություններին համարժեք կրթության ապահովում, համապատասխան միջավայրի ձևավորում
6. Ձևավորվի ինքնուրույնություն, մեդիագրագիտություն, համարձակ երազող, քննարկելու, խոսելու և համագործակցելու պատրաստ անհատ
7. Նպաստել սովորողների հաղորդակցական կարողունակությունների ձևավորմանը: Այս որակն իր մեջ ներառում է լեզուների, մարդկանց հետ շփման տարբեր եղանակների իմացություն, խմբային աշխատանքի, կոլեկտիվում տարբեր դերեր կատարելու կարողունակություններ
8. Ձևավորել այնպիսի անձնային որակներ, որոնք կօգնեն կրտսեր դպրոցի աշակերտին շարունակական կրթության գործում
9. Սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ, զարգացնել գործնականություն
10. Զարգացնել ստեղծագործելու կարողունակությունը

Դպրոցում կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման նպատակով անհրաժեշտ է ամենօրյա հետևողական, համառ աշխատանք, ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում, մանկավարժների մասնագիտական շարունակական զարգացում և ուսումնական միջավայրի որակական փոփոխություն:

21-րդ դարում կրթությունը դա երկխոսություն է ուսուցչի եւ աշակերտի միջեւ: Այսօր կրթությունը չի սահմանափակվում ուսուցչի կարգադրություններով, ինչպես նախկինում էր, երբ ուսուցչի հիմնական դերը տեղեկատվության փոխանցումն էր: Այսօր այն ավելի շատ հիմնված է ոգեշնչելու, լսելու կարողության, շփումների միջոցով նոր գաղափարներ ստեղծելու վրա:

Ուսումնական հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ), զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

Ուսումնական հաստատության տեսլականն է քաղաքակիրթ, ստեղծագործ և ստեղծարար, նախաձեռնող, կարողունակ և մրցունակ, ժամանակին համահունչ քայլող սերունդի թողարկումը, որն իր մեջ կկրի հայրենասեր ու խելացի քաղաքացու բարձրագույն, ինչպես նաև համամարդկային մնայուն արժեքները:

Ուսումնական հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա: Դպրոցն ուղղված է սովորողների ընդհանուր և հատուկ կրթական կարիքների բավարարմանը, ինչն իրականացվում է տարբեր ուղղություններով և մակարդակներում.

- **կառավարում.** ուղղված է սովորողների կրթական կարիքների բացահայտմանն ու նկարագրմանը, դրանց բավարարմանն ուղղված գործողությունների ճանապարհային քարտեզի մշակմանն ու արդյունավետ իրագործմանը

- **ուսումնադաստիարակչական աշխատանքներ.** համարվում են սովորողների կրթական կարիքների բավարարման բուն գործընթացը, իրականացվում են մանկավարժական անձնակազմի կողմից՝ ընդգրկելով ինչպես բուն ուսումնական պրոցեսը, այնպես էլ հարակից սոցիալական և մարզամշակութային միջոցառումները, առանձին սեմինար-քննարկումներն ամենատարբեր թեմաների շուրջ

•**վարչատնտեսական գործունեություն.** ուղղված է ուսումնական գործընթացի կազմակերպման համար նպաստավոր միջավայրի պահպանմանն ու զարգացմանը՝ դպրոցի հնարավորությունների օբյեկտիվ գնահատման հիման վրա

Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

ՀՀ Շիրակի մարզի «Ջաջուռ կայարանի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական տարրական դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

1. Դպրոցը հանդիսանում է ՀՀ Շիրակի մարզի ‹‹Ջաջուռ կայարանի տարրական դպրոց›› ՊՈԱԿ (պետռեգիստրի վկայականի գրանցման համարը 55.210.00399, վկայականի համարը 03Ա-057048, ծածկագիր 10047936:
2. Ուսումնական հաստատությունը գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ՝ հաստատված 22.05.2019 թվականին, գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Ախուրյանի տարածքային բաժնի կողմից:
3. Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ջաջուռավան, 1 փողոց, 32 տնակ:
4. Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով, հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր:
5. Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և գանձապետական հաշիվ:
6. Դպրոցը ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են դպրոցի նախահաշիվը, ֆինանսական հաշվետվությունները, հաստիքացուցակը, հայտարարությունները, ֆեյսբուքյան էջ:
7. Դպրոցն աշխատում է հնգօրյա աշխատանքային ռեժիմով, միահերթ, ունի հաստատված ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան, որի հիման վրա իրականացնում է իր աշխատանքները:
8. Ունի մեկ դասարան՝ քառակոմպլեկտ, վեց աշակերտ 2022-2023 ուստարում:

9. Դպրոցը նախատեսված է 32 աշակերտի համար, իրավունք ունի իրականացնելու տարրական ընդհանուր կրթական ծրագիր՝ աշակերտների հետևյալ սահմանաչափերով.
   1-ին դասարան – 8տեղ
   2-րդ դասարան – 8տեղ
   3-րդ դասարան – 8տեղ
   4-րդ դասարան – 8 տեղ
10. Դպրոցում առկա են պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը /կանոնակարգվող իրավական ակտերը, դպրոցի կանոնադրությունը, տեղայնացված օրինակելի իրավական ակտերը, ներքին իրավական ակտերը/ ։Դրանք վարվում են համապատասխան կարգերի պահանջներին ։
11. Դպրոցում 2010 թվականից մեկնարկել է ՄԱԿ-ի ՊՀԾ կողմից կազմակերպած «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը, որը հնարավորություն էր տալիս դպրոցի տարրական դասարանների աշակերտներին ապահովել առողջ, տաք սնունդով, հաղթահարել աղքատությունը, բարձրացնել դպրոցականների հաճախելիությունը: 2018 թվականի սեպտեմբերից «Դպրոցական սնունդ» ծրագիրը իրականացվում է պետբյուջի ֆինանսավորմամբ: Սակայն 2019 թվականից համապատասխան պայմանների բացակայությունը պատճառ հանդիսացավ, որպեսզի Դպրոցում իրականացվի Դպրոցական չոր սնունդ ծրագիրը: Ծրագիրն իրականացվում է հաջողված, Դպրոցն ապահովում է Չոր սնունդ տրամադրելու համար բոլոր պայմանները:

    Ուսումնական հաստատությունը հանդիսանում է պետության կրթական քաղաքականության կրողը և պետք է նպաստի յուրաքանչյուր սովորողի
    - ✓ Մտավոր, ֆիզիկական, հոգևոր և սոցիալական զարգացմանը
    - ✓ Մարդկային արժանապատվության պահպանմանը
    - ✓ Իր ընդունակություններին, կարողություններին համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը
    - ✓ Ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը
    - ✓ Մասնագիտական կողմնորոշմանը
    - ✓ Ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը
    - ✓ Որպես ապագա քաղաքացու ձևավորմանը

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով: Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի , այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքների ապահովումն է:

Դպրոցը շարունակելու է համագործակցել տարածքային կառավարման մարմնի, հասարակական կազմակերպությունների, շահառու խմբերի հետ: Կրթության որակի բարելավման և Դպրոցում բարելավումների ակնկալիքով կարևոր է ապահովել համայնքի հետ սերտ համագործակցություն: Դպրոցն աջակցումէ համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը՝ համատեղ շաբաթօրյակներ, ծառատունկներ, տոնակատարություններ, հանդիպումներ: Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու Դպրոցում կազմակերպվող միջոցառումներին՝ բաց դասեր, ազգային տոներ, հիշատակի օրեր:

Փորձի փոխանակման նպատակով կարևորվում է նաև համագործակցությունը այլ կրթական հաստատությունների հետ: Սերտ է Դպրոցի և ծնողների համագործակցությունը, քանի որ դպրոցը Ջաջուռավան համայնքի միակ գործող հաստատությունն է և ոչ միայն ծնողների, այլ ամբողջ համայնքի ուշադրության և հոգածության կենտրոնում է:

Նախատեսվում է մինչ այժմ ձեռք բերված համագործակցություններն ավելի սերտացնել, պարբերաբար այցեր կազմակերպել հոգևոր-մշակութային, սոցիալական և զարգացման կառույցներ, նոր համագործակցություններ հաստատել հասարակական և բարեգործական կազմակերպությունների հետ:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ԵՎ ՆԵՐՈՒԺԻՆ

Կրթության կազմակերպման արդյունավետությունը կախված է դպրոցի ենթակառուցվածքների համապատասխանության ժամանակակից չափանիշներին:

Ջաջուռ կայարանի տարրական դպրոց ՊՈԱԿ-ը տնակներում տեղակայվելուց մինչև օրս չունի համապատասխան ենթակառուցվածքային հարմարություններ:

Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված չէ:

- ✓ Տարածքը հեռացված է ավտոճանապարհային գոտուց աղմուկի, օդի աղտոտման աղբյուրի հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից: Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին:
- ✓ Ուսումնական հաստատության տարածքը մաքուր է:
- ✓ Ուսումնական հաստատությունը 2022-2023 ուսումնական տարվանից իրականացնում է ներառական կրթություն: Սովորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող մեկ աշակերտ՝ գնահատված խորը կարիքով : Նրա հետ աշխատում է դասվարը, տնօրենը, քանի որ դպրոցը չունի բազմամասնագիտական թիմ: Համապատասխան մասնագետներն այցելում են ՏՄԱԿ-ից:
- ✓ Դպրոցը հարմարեցված չէ ներառական կրթության պահանջներին:
- ✓ Չկա աշխատասենյակ, որը համալրված է համապատասխան գույքով և ուսումնական պարագաներով: Չկան համապատասխան մասնագետներ, ովքեր կաշխատեն սովորողների հետ՝ նրանց սոցիալականացումն իրականացնելու համար:
- ✓ Ռեսուրս սենյակ առկա չէ:

- ✓ Հեռավար կրթության դեպքում օգտագործվում է Teams, Zoom հարթակները:
- ✓ Ինտերնետ կապի առկայություն՝ առկա է:
- ✓ Բացօթյա սպորտհրապարակ՝ առկա չէ:
- ✓ Մարզադահլիճ՝ առկա չէ:
- ✓ Դահլիճներ, լաբորատորիա, արհեստանոցներ, առարկայական կաբինետներ առկա չեն:
- ✓ Ճաշարան՝ առկա չէ:
- ✓ Բուժկետ՝ առկա չէ: Կա առաջին բուժօգնության պայուսական համապատասխան միջոցներով:
- ✓ Գրադարան՝ առկա չէ, եղած գրքերով առանձնացված պահարանը դրված է առանձնասենյակում:

Մարդկային ռեսուրսներ և հնարավորություններ

Սովորողների չափորոշչային կրթություն ստանաու մատչելիության ապահովման, կրթության որակի բարձրացման նպատակով մեծ ուշադրություն է անհրաժեշտ դարձնել ուսուցչի մասնագիտական որակների շարունակական բարելավմանը: Դպրոցն ունի չորս աշխատակից՝ տնօրեն, հաշվապահ, մեկ դասվար, մեկ դռնապահ-հավաքարար: Դասվարն ունի բարձրագույն մանկավարժական կրթություն, 25 տարվա մանկավարժական գործունեության ստաժ, մասնակցում է բոլոր վերապատրաստումներին, սեմինարներին, վերջին շրջանում անցկացվող վեբինարներին:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.
Ուժեղ և թույլ կողմեր

1.1Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն

Դպրոցը ստեղծվել է 1910 թվականին: : 1988 թվականի երկրաշարժից հետո, 1989թ-ից սկսած տեղակայվել է տնակներում /87ՔՄ/ և գործում է մինչև օրս: Երկար տարիների ընթացքում տնակաները հայտնվել էին շատ անբարեկարգ վիճակում: Ոչ մի անգամ պետական օժանդակություն չի եղել դպրոցի շենքային պայմանները բարելավելու համար: Դպրոցի երկու դասասենյակներից մեկը ամբողջովին կիսաքանդ էր, հատակը՝ փլված, տանիքը՝ ոչ նորմալ վիճակում: Մինչև 2021թ.-ը ջեռուցվում էր դիզելային վառելիքով: 2020թ.-ից սկսած դպրոցը տնօրենության և համայնքի վարչական ղեկավարի ջանքերի շնորհիվ դպրոցն ունեցավ հովանավոր՝ ի դեմս ‹‹Ամքոր Հայաստան›› բարեգործական հիմնադրամի, որի կողմից կատարվեցին վերանորոգման աշխատանքներ: Ամբողջովին փոխվեց դպրոցի տանիքը, հիմնովին վերանորոգվեց հատակը, կատարվեցին ներքին հարդարման աշխատանքներ:

Ամբողջությամբ նորացվել է էլեկտրամատակարարման հաղորդալարերը և 2021թվականից դպրոցն անցել է էլեկտրականությամբ ջեռուցման՝ տաքացուցիչներով, որն ավելի ապահով է և մատչելի: Կառուցվեցին բակային նոր զուգարաններ: Դպրոցը չունի հոսող ջուր, այն բերվում է մոտակա աղբյուրից:

Դպրոցն իր միջոցներով կարողացել է նորացնել պատուհանները, դուռը, աշակերտական սեղան-աթոռները, հարմարեցված լվացարանը, ձեռք է բերվել մեթոդական և մանկական գրականություն, նախատեսվում է ավելի հարստացնել գրադարանային ֆոնդը:

Հաստատության շենքային պայմանների փոփոխություն պետության կողմից հավանաբար չի լինի, քանի որ 2026թ.-ից նախատեսվում է մինչև 100 աշակերտ

ունեցող դպրոցների միավորում: Հնարավոր է ուղղակի գտնել հովանավորներ՝ պայմանների փոքր-ինչ բարելավման նպատակով տնակային կառույցի քարապատում, 1 կամ 2 սենյակի ավելացում:

Այս ենթակետի ուժեղ և թույլ կողմերը առանձնացված չեն, քանի որ հաստատության տնակային լինելը ինքնին թույլ կողմ է:

Շենքային պայմաններ	Քանակը	Փաստացի վիճակը
Դասասենյակ	1	լավ
Աշխատասենյակ	1	լավ
Մուտքի սենյակ	1	բավարար

1.2 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծություն

Որակյալ ուսում և ժամանակակից կրթություն ապահովելու համար առաջնահերթ պայման է կրթական միջավայրի բարելավումը:

«Երեխային տվեք հնարավորություն, և նա ինքը կբացահայտի իր ձիրքերը: Եթե մեզ հաջողվի կրթական միջավայրը դարձնել գրավիչ՝ արդյունքն իրեն սպասել չի տա: Ուսումնական միջավայրը կրթության կարևորագույն բաղադրիչներից մեկն է, որը ենթադրում է ֆիզիկական միջավայրի համապատասխանեցում ժամանակակից կրթության պահանջներին: Ֆիզիկական միջավայրը պետք է լինի գրավիչ, անվտանգ, առողջ, ներառական:

Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, լաբորատորիաների, լաբորատոր սարքավորումների և ՏՀՏ-ների, բարեկարգ մարզադահլիճի և մարզական

համապատասխան գույքի, խաղահրապարակի և բարեկարգ բակի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է, որը լիարժեք կլինի համապատասխան նյութատեխնիկական բազայի առկայության դեպքում: Սա պայմանավորված է նշված բոլոր կետերի առկայությամբ և փոխկապակցվածությամբ:

Հաստատության նյութատեխնիկական բազան , որն անհրաժեշտ է ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացման և կրթության բնագավառի այլ խնդիրների լուծման համար, ստեղծվել և համալրվել է հիմնականում բյուջետային միջոցներով և որոշ չափով համագործակցության, բարեգործության միջոցներով: Ուսումնական հաստատության ուսումնանայութական բազան նյութական և տեխնիկական միջոցների ամբողջությունն է, որը նախատեսված է չափորոշչային պահանջների, ուսումնական ծրագրերի համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացման համար:

Նյութատեխնիկական բազայի հիմնական տարրերն են.

-ուսումնալաբորատոր բազան՝ մասնագիտացված դասարաններով, կաբինետներով, լաբորատորիաներով, ուսումնաարտադրական արհեստանոցներով, ուսումնական գրադարան- ընթերցասրահով, ինչպես նաև տեղեկատվական և տեխնոլոգիաների միջոցներով, լաբորատոր սարքերով, ուսուցման և վերահսկողության տեխնիկական միջոցներով, այլ սարքավորումներով և դիդակտիկ նյութերով զինված այլ ուսումնական և ուսումնաօժանդակ շինություններով շենք (մասնաշենք) է,

- մարզական բազան դպրոցամերձ մարզական տարածքն է, ինչպես նաև մարզահամալիրները և սարքավորումները,

- նախնական զինվորական պատրաստության բազան հրաձգարանն է, այլ օբյեկտներ՝ սարքավորված և զինված պահանջներին համապատասխան,

- տեղեկատվության ապահովման միջոցներ՝ դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ուսումնամեթոդական, գիտական և տեղեկատվական գրականություն,

դպրոցի կանոնադրությունը, ղեկավարության հրամանները, մանկխորհի որոշումները, այլ նորմատիվ փաստաթղթեր, համակարգչային ծրագրեր, համացանց, էլեկտրոնային փոստ, կինո և այլ տեսանյութերի ցուցադրություն, դիդակտիկ նյութեր և այլն:

Անվանում	Քանակ /հատ/
տպիչ	1
USP	1
համակարգիչ	1
աշակերտական սեղան նստարան	5
ուսուցչական աթոռ	2
ուսուցչական սեղան	2
գրատախտակ	2
գրապահարան	2
պահարան	1
կախիչ	1
աշակերտական սեղան	6
աշակերտական աթոռ	10
խաղային կլոր սեղան	1
գորգ	1
էլեկտրոտաքացուցիչ	5

նոթբուք	1
պրոյեկտոր	1
պատուհան	2
դուռ	3
համակարգչային սեղան	1
աշակերտական սեղան աթոռ նոր	5
ուսուցչական աթոռ նոր	10
երկտեղանի լվացարան	1
շերտավարագույր	2

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Դասասենյակն ապահովված է անհրաժեշտ նոր գույքով սեղան-աթոռ, գրատախտակ 2. Կան տարրական դասարանների համար նախատեսված դիդակտիկ պարագաներ, պաստառներ, նյութեր 3. Ձեռք է բերվել տարրական դասարանների սովորողներ համար հետաքրքիր գրականություն 4. Շախմատի անհրաժեշտ պարագաներ 5. Պրոյեկտորը պարբերաբար օգտագործվում է դասապրոցեսների և միջոցառումների ժամանակ 6. Ունի հակահրդեհային պարագաներ 7. Դպրոցը ջեռուցվում է տաքացուցիչներով, որը լիարժեք ապահովում է համապատասխան ջերմաստիճան 8. Առաջին բուժօգնության պարագաներ, դեղորայք 9. Անվճար ինտերնետային կապ 10. Դպրոցն ունի համապատասխան բոլոր դասագրքերը, ձեռք է բերվել գեղարվեստական ու մեթոդական գրականություն 11. ԿԱՊԿՈՒ աշակերտի համար բյուջետային միջոցներից գնվել են զարգացնող պարագաներ, խաղեր, դիդակտիկ նյութեր	1.Առկա մեկ համակարգիչը բավականին հին է, աշխատում է ոչ անխափան 2.Մարզագույքի սակավություն, մաշվածություն, մարզահրապարակի բացակայություն, 3.Դպրոցը չունի տեսահսկման սարքեր, չհրկիզվող պահարան (նախատեսված է ձեռք բերել 3-րդ եռամսյակում) 4. Առկա դասասենյակների մակերեսները չեն համապատասխանում սանիտարական նորմերով սահմանված չափանիշներին: 5. ԿԱՊԿՈՒ երեխաների համար անհրաժեշտ հարմարեցումները բացակայում են: 6. Հոսող ջրի բացակայություն 7. Բարեկարգ բակի բացակայություն

ՆՊԱՏԱԿ

1. Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան ֆիզիկական միջավայրի և նյութատեխնիկական բազայի ապահովում

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Դպրոցական շենքի կառուցում կամ տնակային կառույցի քարապատում, սենյակների ավելացում
2. Հոսող ջրի առկայություն
3. Մարզագույքի ձեռքբերում
4. Նյութատեխնիկական բազայի համալրում
5. Գրադարանի արդիականացում՝ ուսումնաօժանդակ նյութերով, գրքերով համալրում, ծրագրային գեղարվեստական գրականությամբ, մասնագիտական գրականությամբ,
   դիդակտիկ պարագաներով համալրում
6. Ստեղծել ԿԱՊԿՈՒ աշակերտների համար անհրաժեշտ պայմաններ
7. Դպրոցի սովորողների և ծնողների աջակցությամբ տարածքը կանաչապատել և ապահովել խնամքը
8. Դպրոցամերձ տարածքի բարեկարգման աշխատանքներ կատարել

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Հետևել ուսումնական միջավայրի հարմարեցմանը դպրոցի կրթական պահանջներին համապատասխան՝ համագործակցելով վարչատնտեսական մասի համակարգողի հետ

2.Դպրոցի համար շենքային պայմանների ապահովումը պետության կողմից կարելի է համարել անիրատեսական, քանի որ կառավարության նախատեսած դպրոցների միավորման ծրագրով 2026թ.-ից մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցները միավորվելու են մեկ կրթահամալիրի մեջ:

1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն

Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիալ կառավարման խորհուրդ, որը միացյալ խորհուրդ է կազմված 18 անդամից: Հաստատության տնօրենը խորհրդի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով:

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԿՐԱՇԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՄԵԾ ՍԱՐԻԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՋԱՋՈՒՌ ԿԱՅԱՐԱՆԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ

1.	Նարեկ Բեգզադյան Սեդա Մարգարյան	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված,
2.	Մարտին Սարգսյան Արաքսյա Կիրակոսյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրաշենի հիմնական դպրոց՝ պետական ոչ առևտրային կազմակերպության.

1)	Արման Գալոյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ Հայաստանի Հանրապետության Ախուրյան համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
2)	Մարգարիտ Մինասյան Գոհար Սերոբյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրաշենի հիմնական դպրոց՝ պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
3)	Նարինե Ասատրյան Անժելա Թամոյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրաշենի հիմնական դպրոց՝ պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված,

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Սարիարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության.

1)	Արթուր Սարգսյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ Հայաստանի Հանրապետության Ախուրյան համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
2)	Ելենա Վարդապետյան Ագապի Թորոսյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Սարիարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
3)	Սուսաննա Ղազարյան Արմիկ Մինասյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Սարիարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված,

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ջաջուռ կայարանի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության.

1)	Աշոտ Գրեյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ Հայաստանի Հանրապետության Ախուրյան համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
2)	Հերմինե Ասատրյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ջաջուռ կայարանի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
3)	Արևիկ Գևորգյան Թերմինե Հարությունյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ջաջուռ կայարանի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Կառավարման խորհուրդը գործում է դպրոցի կանոնադրությամբ և սահմանված կարգով՝ իր գործառույթներին համապատասխան: Խորհրդի անդամներն առաջադրված են լիազորված մարմնի, մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի և ՏԻՄ ղեկավարի կողմից: 2. Խորհուրդն ակտիվորեն ներգրավված է Դպրոցի կառավարմանը, աջակցում է ներկայացվող բոլոր նախաձեռնություններին: 3. Կառավարման խորհուրդ-տնօրեն համագործակցությունը կատարվում է ոչ միայն օրենսդրությամբ նախատեսված հարցերի քննարկումով, այլ նաև Դպրոցի կազմակերպչական հարցերում խորհրդի մասնակցությամբ: 4. Կառավարման խորհուրդ-տնօրեն համագործակցության շրջանակներում կատարվելու են հետևյալ աշխատանքները. ✓ Աջակցություն Դպրոցի զարգացման ծրագրի կատարմանը, տնօրենի ներկայացմամբ լսում և հավանություն է տալիս զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությանը ✓ Հաստատում է ներքին կարգապահական այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները ✓ Քննարկում է ուսումնադաստիարակչական գործունեության այդ թվում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասին հաշվետվությունները ✓ Քննարկում ներքին և արտաքին գնահատման արդյունքները ✓ Հաստատում է ուսուցչի թափուր տեղի	1.Չնայած խորհրդի անդամների համար իրականացված վերապատրաստումներին՝ կառավարման խորհրդի որոշ անդամներ չեն տիրապետում օրենսդրական կարգավորումներին, դրսևորում են իրենց գործառույթների ոչ լիարժեք գիտակցում: 2.Զարգացման ծրագրին աջակցության, նախաձեռնողականության պասիվություն 3.Միացյալ խորհրդի այն անդամները, ովքեր չեն հանդիսանում տվյալ դպրոցի խորհրդի անմիջական ներկայացուցիչ, դրսևորում են ոչ մեծ ակտիվություն,ձեռնպահ վերաբերմունք, երբ քննարկվող հարցը չի վերաբերում իրենց դպրոցին:

համար անցկացվելիք մրցույթի կարգը և դրա փոփոխությունները ✓ Տարիֆիկացիայի, հաստիքացուցակի, նախահաշվի, բյուջեի նախագծի քննարկում 5. Միացյալ խորհրդի դեպքում անդամների քանակի շատ լինելը նպաստում է տնօրենի պատասխանատվության զգացումի մեծացմանը, քանի որ նրա աշխատանքի ընթացքը և արդյունքը լսելի է ևս 2 դպրոցների անդամներին:	

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կառավարման մարմինը՝ խորհուրդը և խորհրդակցական մարմինները՝ մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքները 2.Ծնողխորհուրդը աջակցում է դպրոցում միջոցառումների կազմակերպմանը 3.Աջակցում է դասարանական միջոցառումների, էքսկուրսիաների, արտադասարանական միջոցառումների կազմակերպմանը 4. Դպրոցը համագործակցում է համայնքի ընտանիքների հետ, մասնակցում խնդիրների բացահայտմանը և լուծմանը	1. դպրոցը չունի մեթոդական միավորում, քանի որ ունի մեկ մանակավարժ, որը դասավանդում է քառակոմպլեկտ դասարանում 2.Չունի հոգաբարձուների խորհուրդ 3.Մանկավարժական խորհուրդը թվաքանակով քիչ է, վերը նշված պատճառով: 4.Դպրոցը չի կազմակերպում երկարօրյա ուսուցում

ՆՊԱՏԱԿ

1.Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացում
2.Առկա կառավարման մոդելը դարձնել ավելի համագործակցային
3.Ուսումնադաստիարակչական աշխատանքներում ծնողական համայնքի ակտիվության բարձրացում
4.Ծնող-դպրոց կապի առավել ամրապնդում
5.Ուսուցչի դերի և վարկանիշի բարձրացում

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Կառավարման խորհրդի դերի բարձրացումը դպրոցի հետ համագործակցության արդյունքում
2. Ծնողական խորհրդի համագործակցության բարելավում
3. Մանկխորհրդի լիազորությունների գործնական կիրառում
4. Հոգաբարձուներ խորհրդի ձևավորում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները հետևյալ ուղղություններով 1.Խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին, միջոցառումներին, մրցույթներին, ներքին գնահատման աշխատանքներին։ 2.Նյութատեխնիկակա ն բազայի հարստացման ուղղությամբ որոշումների	Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում 1.Ծնողների և մանակավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում։ 2.Ծնողների ներգրավվածությունը իրենց երեխաների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին։ 3. Ծնողների մասնակցությունը սովորողների	1. Շարունակել մանկավարժակ ան խորհրդի աշխատանքներ ում կիրառել մասնակցային քննարկումների և որոշումների ընդունման սկզբունքները։ 2.Ուշադրության կենտրոնում պահել մանկավարժակ ան խորհրդի ընդունած որոշումները ճիշտ ժամանակին կատարումը։ 3.Ուսուցիչների	1.Անհրաժեշտ է դպրոցում ստեղծել հոգաբարձուներ ի խորհուրդ 2.Այդ խորհրդի կազմում պետք է ընդգրկել անհատ ձեռներեցների, դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց 3.Նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների

ընդունում։ 3.Կրթության պետական կառավարման լիազորված մարմին, լիազորված մարմին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում։ 4. Ապահովել մյուս խորհուրդների հետ սերտ համագործակցություն։	ուսուցման, դաստիարակության գործընթացին, ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորներին 4. Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդման համար կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ։ 5. կազմակերպել համատեղ (ծնող, աշակերտ, ուսուցչական կոլեկտիվ) միջոցառումներ։ 6.Ծնողխորհրդի նիստում հանդես գալ առաջարկություններով, խթանել հետաքրքիր նախաձեռնությունների իրականացմանը։ 7. Ծնողների նախաձեռնությունները և մասնակցությունը ուսումնադաստիարակչակա ն գործընթացին հրապարակել կայքում,մամուլում։ 8.Ծնողխորհրդի կապի ամրապնդում՝ դպրոցի կառավարման խորհրդի և մանակվարժական խորհրդի հետ՝ ապահովելով	աշխատանքների գնահատման և խրախուսման նոր գործիքների կիրառում։ 4.Առաջավոր փորձի հիման վրա դպրոցի աշխատանքների ակտիվացում։ 5.Ուսումնական պլանների,ծրագրերի և դասագրքերի համալիր ստեղծման գործընթացին ուսուցիչների ակտիվ մասնակցությա ն ապահովում։ 6. Սովորողների գիտելիքների ստուգման ու գնահատման համակարգի առավել արդյունավետ աշխատակարգ ի մշակման ու կիրառման ներդրում	հայթայթմանը, նյութատեխնիկ ական բազայի համալրմանը Հոգաբարձուների նպատակը պետք է լինի ներդրումներ և նվիրատվությունն եր ձեռք բերելը։ Դրա մեջ պետք է ներգրավել անհատ բարերարների, կամավորների։

	տեղեկատվության կազմակերպումը և տարածումը։ 9.Աջակցությունը ծնողական խորհրդի աշխատանքների կազմակերպմանը՝ հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային աշխատանքների համապատասխան բնագավառում 10.Կարիքի գնահատում անցած աշակերտների ծնողների հետ տանել առանձին սոցիալ-հոգեբանական աշխատանք		

1.4.Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր

1.Հաստատության կառավարումն իրականացվում է կանոնադրության համապատասխան: Համագործակցում է ՀՀ կառավարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Շիրակի մարզպետի աշխատակազմի, Ախուրյանի համայնքապետարանի, Ջաջուռավան գյուղի վարչական ղեկավարի, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, Գնահատման և թեստավորման կենտրոնի, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի, Շիրակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի, ԿՁՆԱԿ-ի, այլ դպրոցների, հասարակական կազմակերպությունների հետ:	1.Համայնքային կրթական, մշակութային նախաձեռնությունների սակավություն
2.Դպրոցը Ջաջուռավան համայնքի միակ պետական հաստատությունն է և գտնվում է համայնքի վարչական ղեկավարի, բնակչության մեծ ուշադրության և հոգածության կենտրոնում:	2.Համայնքապետարանը, չունենալով դպրոցի կառավարման գործին մասնակցություն, գրեթե անտարբերության հասնող պասիվություն է դրսևորում Դպրոցի գործունեության նկատմամբ
3. Դպրոց – համայնք համագործակցությունը դրսևորվում է հիմնականում համայնքային շաբաթօրյակների, ծառատունկերի, եկեղեցական տոների դեպքում	3. Ջաջուռավան համայնքի սոցիալական վատ վիճակը, նյութականը ապահովելու հոգսերը ծնողներին շատ դեպքերում անտարբեր են դարձնում դպրոցի, կրթության նկատմամբ:
4. Համայնքին՝ բարերարների աջակցության դեպքում, վարչական ղեկավարի ջանքերով ուշադրության են արժանանում նաև դպրոցի աշակերտները	4. Ծնողական համայնքը չի դրսևորում նախաձեռնողականություն, աշխատանքները կազմակերպվում են Դպրոցի կողմից
5.Կրթության կառավարման մարմիններ հետ համագործակցությունը հիմնադիր, լիազոր մարմին դրսևորվում է օրենքների, նորմատիվ իրավական ակտերի համապատասխան ժամկետներում կատարմամբ, պարտադիր փաստաթղթաշրջանառության օրինակելի վարմամբ	5. Համայնքի սոցիալ-մշակութային զարգացման ցածր մակարդակ
6.Դպրոց-ընտանիք-ծնող կապն առավել սերտ է, քանի որ դպրոցի և ծնողների կողմից աշակերտների կրթության և դաստիարակության հարցերում ձևավորված են	

միասնական պահանջներ:	
7.Արտադպրոցական միջոցառումներ կազմակերպման դեպքում ծնողական համայնքը ակտիվորեն ներգրավվում է այդ աշխատանքներին, որի արդյունքը լինում է լավ կազմակերպված նպատակային էքսկուրսիաները, այցելությունները մշակութային հաստատություններ	
8.Համայնքը և դպրոցը համգործակցում են «Ամքոր Հայաստան» բարեգործական հիմնադրամի հետ, որն էլ մեծ աշխատանքներ է կատարել դպրոցի վատ պայմանները բարելավելու գործում:	

ՆՊԱՏԱԿ

1.Դպրոց-ծնող-համայնք կապերի ամրապնդում:

2.Դպրոցի զարգացման գործում ծնողների և համայնքի ակտիվ մասնակցություն:

3. Սովորողների սոցիալականացման ապահովում:

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Համագործակցել տարածքային կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ:

2. Զարգացնել սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունները:

3. Համագործակցել կրթական հաստատությունների, հանրակրթական դպրոցների հետ:

4.Համայնքի առավելագույն ներգրավվածություն Դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության մեջ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Դպրոցի միջոցառումներին հրավիրել մարզային իշխանության անդամներին ,այդ թվում հասարակական կազմակերպությունների ղեկավարներին: 2.Փոխադարձաբար ակտիվ մասնակցություն ունենալ մարզային և հասարակական կազմակերպությունների միջոցառումներին: 3.Կազմակերպել և անցկացնել հանդիպում - ցերեկույթների մարզի, համայնքի նշանավոր մարդկանց՝ ավեստագետների, արհեստագործվարպետների, մշակույթի գործիչների,գործարարների հետ: 4.Կազմակերպել այցելություններ արվեստագետների արվեստանոցներ, ցուցահանդեսներ: 5.Կազմակերպելայցելություններ մշակութային կենտրոններ: 6.Համայնքին ներգրավել դպրոցի նյութատեխնիկական բազան հարստացնելու աշխատանքներին	1.Ծանոթանալ մարզում առանձին դպրոցների արտադասարանական գործունեությանը, կազմակերպել համագործակցություն առավել ակտիվ դպրոցների հետ. 2.Համագործակցել համայնքի հետ հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի մասնակցության նպատակով 3.Աշխատանքային դաստիարակության նպատակով համագործակցել համայնքի հետ՝ կազմակերպել շաբաթօրյակներ, ծառատունկներ 4.Ազգային և համաշխարհային մշակությաին արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակով: Համագործակցել մարզում, համայնքում գործող արվեստի դպրոցների,գրադարանների հետ: 6. Կազմակերպել էքսկուրսիաներ Հայաստանի պատմամշակությաին վայրեր, այցելություններ թանգարաններ, ցուցասրահներ, թատրոններ:

1.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում

«ՀՀ հանրակրթության մասին օրենքը» սահմանում է ընդհանրական պահանջներ, որոնք վերաբերում են բոլոր ուսուցիչներին: Սակայն տարրական դասարանների ուսուցչին ներկայացվող պահանջներն ինքնատիպ են և ունեն նաև այլ բնութագրիչներ: Դրանք հիմնականում պայմանավորված են երեխայի բարձրարժեքությամբ, նրա տարիքային առանձնահատկություններով, տարրական կրթության արդիական խնդիրներով և բովանդակությամբ, հասարակական միջավայրին ինտեգրվելու պահանջով, ճգնաժամային փուլի խնդիրներով և

մանկավարժի մասնագիտական կոմպետենտությամբ: Վերջինս ոչ թե պիտի հանդես գա որպես գիտելիքներ փոխանցողի, այլ երեխային աջակցողի, գիտելիքների ձեռքբերման գործընթացում ուղեկցողի դերում: Ուսուցչի կարևորագույն գործառույթը սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացները մանկավարժորեն կառավարելն է՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական, տարիքային առանձնահատկություններն ու ընդունակությունները, զարգացման մակարդակը, կրթական կարիքները՝ ստեղծելով համապատասխան մանկավարժական պայմաններ

Տարրական դպրոցի ուսուցչի համար կարևոր անձնային որակներն են մարդասիրությունը, բարությունը, մանկավարժական տակտը, համբերատարությունը, պատասխանատվությունը, լավատեսությունը, ապրումակցումն ու հուզական հավասարակշռվածությունը, ընկերասիրությունը, սկզբունքայնությունը և այլն:

Այսպիսով, եթե ընդհանրապես ժամանակակից ուսուցչին ներկայացվող առաջնահերթ պահանջներից է մասնագիտական գիտելիքների և մանկավարժական կարողությունների առկայությունը, ապա տարրական դպրոցի ուսուցչի համար առաջնային են նրա անձնային որակները, երեխաների նկատմամբ սերը, հաղորդակցական և համագործակցային կարողությունները:

Դպրոցն ունի մեկ դասվար, քառակոմպլեկտ մեկ դասարան:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Ուսուցիչն ունի բարձրագույն կրթություն, ատեստավորված է, փորձառու (25 տարվա մանկավարժական աշխատանքային փորձ): Տիրապետում է իր մասնագիտությանը, կարողանում է քառակոմպլեկտ դասարանում ճիշտ պլանավորել ուսումնական գործընթացը, բոլոր աշակերտներին պահել ուշադրության կենտրոնում:	1.Դպրոցը չունի այլ մանկավարժներ, մրցակցության պակաս 2.Չնայած դասվարը 2010թ.-ից պարապում է նաև օտար լեզվի և ռուսաց լեզվի դասաժամերը, բավականին պատրաստված է՝ կարիք կա այդ լեզուների մասնագետի: Դասաժամերի քիչ լինելը չի գրավում մասնագետներին:
2.Ունի դասվարի համար անհրաժեշտ մարդկային և մանկավարժական բոլոր բնութագրիչները՝ նախաձեռնող , բարի, հոգատար, պարտաճանաչ	3.Տարակարգի ստացման, կամավոր ատեստավորման մասնակցության բացակայություն

3.Աշխատում է չափորոշչային պահանջներին համապատասխան, մշտապես մասնակցում է բոլոր վերապատրաստումներին, մասնագիտական որոկների բարձրացմանն ուղղված դասընթացների, վեբինարների	4.Ինքնազարգացմանն ուղղված քայլերի անվստահություն
4.Տիրապետում է ՏՀՏ գործիքներին, դասերը հիմնականում անցկացնում է ժամանակակից մեթոդներով, լրացուցիչ նյութերի օգտագործումով	5.ԿԱՊԿՈՒ սովորողի համար հոգեբանամանկավարժական աջակցության թիմի բացակայություն
5. բարձր պատասխանատվություն, աշակերտակենտրոն մոտեցումներով առաջնորդվելու կարողություն սովորողի հաջողության կարևորում և գնահատում, դաստիրակաչական աշխատանքների լիարժեք իրականացում	
6.Ներառական կրթության թեմայով վերապատրաստված վարչական աշխատող և դասվար	
7.Դասվարի կողմից բարեվարքության կանոնների խախտման բացառում	

ՆՊԱՏԱԿ

1. Մանկավարժական համակազմի որակական և մասնագիտական կարողունակությունների բարձրացում
2. Ուսուցչի որակավորման բարձրացման հնարվորությունները խթանելու համար ստեղծել համագործակցային միջավայր վերապատրաստող կազմակերպությունների հետ
3. Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնազարգազման նոր հնավորությունների կիրառում

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ուսուցիչների ինքնազարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում
2. Դասավանդման մեթոդների արդիականացում և բարելավում, մեթոդական վարպետության կատարելագործում
3. ՏՀՏ նոր գործիքների իմացության և տիրապետման կարողությունների ձեռքբերում
4. Մշակել ուսուցիչների ինքնագնահատման և խրախուսման ընթացակարգեր **(ուսուցչի ինքնագնահատման հարցաշար)**

5. Հետևել դպրոցում աշխատողների բարեվարքությանը, արդարության պահպանմանը

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Ուսուցիչներին ծանոթացնել նոր ՀՊՉ-ին և նրանից բխող ծրագրային և մեթոդական փոփոխություններին

2.Սեմինարների, վեբինարների ակտիվ մասնակցություն, ինքնակրթության և ինքնավերլուծության համար հնարավորությունների ընձեռում

3.Ոլորտի լավագույն մասնագետների հետ փորձի փոխանակման և վերապատրաստան միջոցառումների իրականացում

4.Հերթական և կամավոր ատեստավորումներին ուսուցիչների մասնակցության խթանում: Որակավորման տարակարգ ստանալու գործընթացին աջակցում

5.Ուսուցչին տրամադրել մեթոդական գրականություն, դիդակտիկ պարագաներ, էլեկտրոնային կրթական նյութեր,

6.Ուսուցիչների ՏՀՏ գիտելիքները և կարողությունները խորացնելու նպատակով իրականացնել վերապատրաստումներ

7.Շահագրգռել մանկավարժներին՝ կատարելու հետազոտական աշխատանքներ, ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար

8.Գործածության մեջ դնել ուսուցիչների ինքնագնահատման սանդղակը՝ միաժամանակ սահմանելով նյութական խրախուսման տեսակներ

9.Գործածության մեջ դնել մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները

Ուսուցչի ինքնագնահատման հարցաշարի օրինակ

Սեփական փորձի անկողմնակալ և ինքնաքննադատական վերլուծությամբ և գնահատմամբ հնարավոր է նպատակաուղղված մասնագիտական առաջընթաց: Ինքնագնահատման հարցաշարը հանդես է գալիս որպես ուսուցչի աջակցող գործիք, որի նպատակն է, որ ուսուցիչը որոշի և գիտակցի, թե որքանով են համապատասխանում իր գիտելիքը, հմտությունները, վերաբերմունքը ուսուցչի չափորոշչային պահանջներին, բացահայտի և վերլուծի կիր ուժեղ և թույլ կողմերը և մասնագիտական զարգացման գործողություններով ավելի բարելավի իր փորձը: Ինքնագնահատման հարցաշարը բաղկացած է երկու ուղղություններից: Դրանք են. 1. ուսումնական գործընթացի կառավարում, 2. մասնագիտական պատասխանատվություններ, որոնք, իրենց հերթին, բաշխված են ոլորտների, ենթաոլորտների:

Ուղղություն՝ Ուսումնական գործընթացի կառավարում

Ոլորտ՝ Ուսումնական գործընթաց, ուսումնական միջավայր

ԵՆԹԱՈԼՈՐՏ Դասարանի կառավարում (վարքի կանոնների պահպանում)	**Կիրառում եմ**	**Կիրառում եմ մասամբ**	**Չեմ կիրառում**	**Ծանոթություն**
1.Ունեմ մշակված վարքի կանոններ և ընթացակարգեր, դրանց կազմելուն մասնակցել են աշակերտները				
2.Ունեմ մշակված				

առաջադրանք տալու սովորական ընթացակարգ (օրինակ, տարրական դասարաններում ամեն օր գրատախտակի վրա միևնույն տեղում առաջադրանքի պայմանը գրելը):				
3.Ունեմ աշակերտների կարգապահության և վարքի կառավարման մշակված համակարգ՝ խրախուսման և պատժման մեխանիզմներով				
4.Կարողանում եմ դասի ժամանակ կազմակերպչական հարցեր կարգավորել (նյութերի բաժանում, աշակերտների հաշվառում և այլն)նվազագույն ժամանակի օգտագործմամբ				
Եվ այլն…….				

1.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացում

ՏՀՏ արագ զարգացումն ամբողջ աշխարհում նոր պահանջներ է դնում կրթության համակարգի առջև: Կրթական ծրագրերի իրականացման, սովորողների ուսման նկատմամաբ հետաքրքրվածության, ուսուցման որակի բարձրացմանը նպաստող կարևոր գործոն է ՏՀՏ-ների, նորարարությունների ներդնումը դասապրոցեսում:

Դպրոցում ՏՀՏ-ների կիրառման հիմնական ուղղություններն են.

- ✓ Տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում
- ✓ Տեխնոլոգիաների կիրառումը դպրոցավարության մեջ
- ✓ Տեխնոլոգիաների կիրառումը այլ դպրոցների, կազմակերպությունների, ծնողների հետ համագործակցության, վերապատրաստումների գործում

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Դպրոցում առկա են պարտադիր գործածության երաշխավորված էլեկտրոնային փաստաթղթեր և դրանք վարվում են ըստ կարգի 2.Դպրոցն ունի 1 համակարգիչ, 1 նոթբուք, 1 պրոյեկտոր, 1 բազմաֆունկցիոնալ տպիչ սարք, որոնք օգտագործվում են ուսումնական և վարչական աշխատանքների կատարման համար: 3. Դպրոցն ապահովված է ինտերնետային կապով Հարմոնիա հիմնադրամի կողմից: 4. Դասվարը հաճախ է օգտագործում նոթբուքն ու պրոյեկտորը դասերի, միջոցառումների ժամանակ 5.Աշակերտների համար կազմակերպվում են տեսանյութերի դիտումներ: 6.Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարմանը նպաստում և օժանդակում են կրթական կայքերը՝ ԿՏԱԿ, ԿԶՆԱԿ հիմնադրամ, «Պաշարների շտեմարան»: 7. Մանկավարժական և վարչական կազմը տիրապետում են Teams, Zoom միասնական	1. Համակարգիչը հին է, Դպրոցը կարիք ունի նոր համակարգչի 2. ՏՀՏ տեխնոլոգիաների կիրառումը դասերին առկա է, սակայն կարիք կա ժամանակակից կրթական պահանջներին ավելի համահունչ կազմակերպել այդ դասերը: 3. Եղած սարքավորումների մաշվածություն 4. Դպրոցը չունի էլեկտրոնային գրատախտակ

կրթական հարթակին; 8. Համարյա անթերի վարվում են emis.am էլեկտրոնային մատյանը և դպրոցի տեղեկատվական բազայի մուտքագրումը	

ՆՊԱՏԱԿ

1. Կրթության որակի բարելավում, դասավանդման մոտեցումների արդիականացում, հեռավար ուսուցման գործիքակազմի և ռեսուրսների արդիականացում

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում
2. Մեդիագրագիտության կարևորում ու զարգացում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համակարգչային տեխնիկայի համալրում, ժամանակակից գրականության ձեռքբերում
2. Հեռավար դասավանդման հմտությունների զարգացում /ուսուցիչների ինքնակրթություն, սեմինարներ, վեբինարներ
3. Էլեկտրոնային կրթական ռեսուրսների ձեռքբերում և կիրառում
4. Նոր սերնդի համակարգչային տեխնիկայի ձեռքբերում
5. Մեդիագրագիտության վերաբերյալ քննարկումներ, վերապատրաստումների և վեբինարներին ակտիվ մասնակցություն
6. Ուսումնական պլանի հիման վրա կրթության կառավարման տեղեկատվական համակարգում իրականացնել դասաբաշխում, ձևավորել և հաստատել ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ հաստիքների ցուցակը

1.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

Նոր չափորոշչով կարողունակությունների կոմպետենցիաների վրա հիմնված կրթությունը հանդիսանում է կրթության կազմակերպման ռազմավարությունը: Այն իրենից ներկայացնում է գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեքային համակարգ: Կրթության որակն ուսումնական գործընթացի համապատասխանությունն է սահմանված նպատակներին, ամբողջական արդյունքն է և ներառում է.

- ✓ Սովորողներին, ովքեր առողջ են, պատրաստ սովորելու և մասնակցելու ուսումնառության գործընթացին՝ ստանալով իրենց ընտանիքների լիակատար աջակցությունը.
- ✓ Ուսումնական միջավայրը, որը բարեկարգ է ու անվտանգ, ապահովում է առողջության պահպանումը, ինչպես նաև հագեցած է անհրաժեշտ ուսումնական գույքով և ռեսուրսներով.
- ✓ Կրթության բովանդակությունը, որը սահմանված է կրթության չափորոշիչներով, առարկայական շրագրերով, ուսումնական պլաններով ու արտացոլված ուսումնամեթոդական նյութերում
- ✓ Որակյալ ուսուցչական կազմ, որն օգտագործում է աշակերտակենտրոն ուսուցման մեթոդներ
- ✓ Հմուտ ղեկավարվող ուսումնական գործընթաց, արժանահավատ և արդար գնահատման համակարգ
- ✓ Ուսուցման վերջնարդյունքները, որոնք ներառում են սովորողների գիտելիքները, կարողունակությունները, հմտությունները, արժեքային համակարգը:

Միջնակարգ կրթության պետական չափորոշչում տարրական դպրոցի համար սահմանվում են սովորողին ներկայացվող ընդհանրական և որակական պահանջներ, որոնց վերջնարդյունքը սովորողի անձի զարգացումն է, մաթեմատիկական, ստեղծագործական մտածողության, գիտական աշխարհայացքի և արժեհամակարգի ձևավորումը:

Տարրական դասարաններում մանկավարժական աշխատանքի ճիշտ կազմակերպմամբ և կրտսեր դպրոցականի անատոմիական և ֆիզիոլոգիական

առանձնահատկությունների հաշվառմամբ հնարավոր է ապահովել երեխայի ֆիզիկական ու մտավոր զարգացման ճիշտ ընթացքը:

Կրտսեր դպրոցական տարիքում երեխան արդեն հոգեբանորեն պատրաստ է ուսումնական գործունեության, գրեթե առանց դժվարությունների իրականացվում է կրտսեր դպրոցականների ճանաչողական գործունեությունը: Ուշագրավ է, որ ուսումնական նյութի ընկալման ընթացքում խորացված, կազմակերպված և նպատակաուղղված վերլուծություն նրանք դեռևս չեն կարողանում իրականացնել, երբեմն նկատելով պատահական մանրամասներ՝ չեն ընկալում էականը: Ուսուցման գործընթացի սկզբնական շրջանում կրտսեր դպրոցականների ընկալման մակարդակը սերտորեն պայմանավորված է նրանց գործողություններով և պրակտիկ գործունեությամբ: Նրանց ընկալմանը բնորոշ է ցայտուն արտահայտված հուզականությունը:

Կրտսեր դպրոցականի ուսումնական դրդապատճառները դեռևս ամբողջովին գիտակցված չեն, իսկ կամքով պայմանավորված գործողությունները՝ թերի, անբավար՝ չնայած այն բանին, որ այդ տարիքում երեխաներն ունենում են որոշակի հաստատակամություն և կարող են իրենց առջև դնել ավելի հեռավոր նպատակներ: Փորձելով հասնել դրանց՝ նրանք հաճախ ստանձնած գործը չեն հասցնում ավարտին, հետամուտ չեն լինում բոլոր դժվարությունները հաղթահարելու խնդրում, իսկ անհաջողության դեպքում կարող են կորցնել հավատը սեփական ուժերի նկատմամբ:

Չպետք է մոռանալ, որ կրտսեր դպրոցականի համար ուսումնառությունը բավականին ծանր ու պատասխանատու գործընթաց է: Եվ այն, որ ուղղակի անհրաժեշտ է սովորել, նրանց համար դեռևս հիմնարար պատճառ չէ. կրտսեր դպրոցականին առաջին հերթին անհրաժեշտ է նախապատրաստել և տրամադրել սովորելու՝ հաշվի առնելով հետևյալ կանոնները.

- ✓ Զգտել հասկանալ երեխաներին, հաշվի առնել նրանց ցանկությունները:
- ✓ Բարենպաստ պայմաններ ստեղծել նոր ցանկությունների ձևավորման համար:
- ✓ Մշտապես ներկայացնել դրական օրինակներ:
- ✓ Զրուցել այն ամենի մասին, ինչ հետաքրքրում է սովորողներին:
- ✓ Խրախուսել դասարանում ճանաչվելու և ընդունվելու երեխաների ձգտումը:
- ✓ Մատնանշել նրանց բոլոր առավելությունները, ձեռքբերումները:
- ✓ Ստեղծել հաջողության իրավիճակներ:
- ✓ Ուսումնական գործունեությունը դարձնել գրավիչ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Դպրոցում երաշխավորված է երեխաների՝ կրթություն ստանալու հիմնարար իրավունքը 2. Որակյալ կրթությանը զուգահեռ՝ մեծ ուշադրություն է դարձվում հայրենասիրական դաստիարակությանը, մարդկային արժեքների ձևավորմանը, երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացմանը 3. Ամենօրյան հետևողական աշխատանք է տարվում ուսուցման որակը բարելավելու, սովորողների հմտությունները զարգացնելու, առողջությունն ու անվտանգությունը պահպանելու ուղղությամբ: 4. Թեմատիկ պլաններն ունեն չափորոշչային և ծրագրային համապատասխանություն 5. Թերի կատարված կամ չկատարված գործողությունների պատճառների արագ պարզաբանում և շտկում 6. Արտադասարանական, արտադպրոցական նպատակային միջոցառումներ, այցելություններ մշակութային և ժամանցային վայրեր՝ գեղագիտական ճաշակի ձևավորման, ճանաչողական ակտիվության զարգացման նպատակով: 7.Փոքրաքանակ աշակերտական կազմը ստեղծում է ընտանեկան մթնոլորտ, որտեղ մարդկային հարաբերություններն ավելի սերտ են և հուզականորեն հագեցած, որն էլ դաստիրակչական հզոր ներուժ է 8. Մի շարք սոցիալական որակների առումով բազմահամակազմ դասարանում սովորողների հասունացումը իրականացվում է ավելի արագ և արդյունավետ՝ փոքրերը մեծերից յուրացնում են հաղորդակցական կարողություններ, իսկ մեծերը սովորում են լինել առավել հանդուրժող և մեծահոգի, ձևավորվում է կարեկցանքի և պատասխանատվության զգացումներ:	1. Քառակոմպլեկտ դասարան, մեկ դասվար, մրցակցության բացակայություն 2. Դասաժամի ռացիոնալ օգտագործման խնդիր, քանի որ բազմահամակազմ դասարանում ուսուցիչն աշխատում է տարբեր ուսումնական ծրագրեր իրականացնող տարատարիք աշակերտական խմբերի հետ 3. Բազմահամակազմ դասարանում սովորողների տարբեր ուսումնական խնդիրները և փոքրաթիվությունը հնարավորություն չեն տալիս խմբային լիարժեք աշխատանքներ կազմակերպել, որից էլ տուժում է համագործակցային ուսուցման մեթոդը: 4. Կրտսեր դպրոցականի չձևավորված ուշադրությունը և կամքը 5. Անկայուն հետաքրքրություններ 6. Դպրոցին նախապատրաստված չլինելը 7. Երբեմն ծնողի կողմից վերահսկողության ցածր մակարդակ, որը հանգեցնում է երեխային անտարբերության

9. Անհատական ուսուցման հնարավորություններն ավելի մեծ են բազմահամակազմ դասարանում: Աշակերտների փոքր քանակը դասվարին հնարավորություն է տալիս խորությամբ ճանաչել յուրաքանչյուրին, նրանց անհատական առանձնահատկությունները, խառնվածքը, արժեքային որակները: 10. Բացի դասագրքերից դպրոցը սովորողներին ապահովում է ընթերցանության, ընդհանուր զարգացման համար գրքերով և ուսումնական նյութերով, դիդակտիկ պարագաներով 11. Դասերին համակարգչի և պրոյեկտորի կիրառումը ավելի արդյունավետ է դարձնում նյութի ընկալման գործընթացը: 12. Կրտսեր դպրոցականի կողմից պատասխանատվության մեծ զգացում 13. Վստահությունն ու սերը ուսուցչի նկատմամբ 14. Բացակայությունների ցածր ցուցանիշ	

ՆՊԱՏԱԿ

1.Կրթության որակի բարելավում, չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովում: Աշխատանք օժտված երեխաների հետ:
2.Անհատական մոտեցման ցուցաբերում ԿԱՊԿՈ սովորողների կրթության որակի բարելավմանը**:**
3.Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինում

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ուսումնական գործընթացի փաստացի վիճակի և վերջնարդյունքների գնահատում
2. Մեծ ուշադրություն դարձնել նոր ուսումնասիրվող օտար լեզուների ուսուցմանը
3. Դասավանդման նորագույն մեթոդների և տեխնոլոգիաների օգտագործում դասապրոցեսում

4. Հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան կրթության իրացում
5. Կարողունակությունների ձևավորում
6. Ուսուցման և դաստիարակության գործընթացի իրականացում արդիական մեթոդական և դիդակտիկ նյութերի ապահովմամբ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Ուսումնասիրել փոփոխված չափորոշչային նոր պահանջները, կատարել դրանց ներդրման համար համապատասխան գործողություններ

2.Կատարել դիտարկումներ և ուսումնասիրություններ աշակերտների և ծնողների շրջանում աշակերտների մշակութային, հոգևոր, կրթական, ինչպես նաև կարողունակությունների զարգացմանն ուղղված կարիքների բացահայտման նպատակով

3.Աշակերտեների առաջադիմության ստուգման, գնահատման, կրթական կարիքների բավարարման նպատակով շարունակել կատարել համապատասխան գործողություններ

- ✓ Տնօրինության կողմից գրավոր աշխատանքներ
- ✓ Դասալսումներ
- ✓ Հայտորոշիչ թեստեր
- ✓ Տնօրենի կողմից մշտապես կատարվող բանավոր հարցումների միջոցով դասավանդման որակի ստուգում
  Մնացորդային գիտելիքների ստուգման և վերջնարդյունքների գնահատման նպատակով տալ հայտորոշիչ աշխատանքներ, իրականացնել մշտադիտարկումներ

4.Օժտված երեխաների հետ անհատական ծրագրերով խորացված ուսուցման կազմակերպում

5.Թույլ ընդունակություններ ունեցող և ներառված աշակերտների նկատմամբ անհատական մոտեցում և նպատակային գործողություններ

6.Հանրակրթությանը ներկայացվող ժամանակակից մոտեցումներից ելնելով՝ օտար լեզուների ուսուցմանը դարձնել մեծ ուշադրություն

7.Հարստացնել ուսումնամեթոդական բազան: Ձեռք բերել ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցներ, գեղարվեստական, գիտական գրքեր

8.Լայնորեն կիրառել դասաժամի արդյունավետությունը բարձրացնող միջոցներ՝ ուսումնադիդակտիկ պարագաներ, սլայդներ, տեսաժապավեններ, պլակատներ, աղյուսակներ, մուլյաժներ, գործիքներ, նյութեր:

9.Կազմակերպել ուսուցիչների վերապատրաստումներ ու զանազան տեղեկատվական վեբինարներ արդյունավետ աշխատելու և տեղեկատվական գործիքնեից օգտվելու համար

Սովորողի՝

♦ մտավոր, հոգեկան և ֆիզիկական կարողությունների զարգացում,

♦ լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության, աշխարհայացքային պատկերացումների հիմքերի ստեղծում,

♦ աշխատանքային տարրական կարողությունների ձևավորում,

♦ բարեկիրթ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքերի ձևավորում,

♦ բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակություն և առողջ ապրելակերպի հիմքերի արմատավորում,

1.Կիրառել իրավիճակային խնդիրներ, թեստեր, դերային խաղեր, խաչբառեր, խճանկարներ, ինտերակտիվ ուսուցման մեթոդներ, ստուգատես մրցույթներ և այլ մեթոդներ.

2.միջին դպրոցում կրթությունը շարունակելու համար անհրաժեշտ գիտելիքների և կարողունակությունների մակարդակի և կրթության շարունակականության ապահովումը:

1.8 Բազմակարծիք , ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Մարդուն շրջապատող միջավայրը նրա զարգացման վրա ազդող ամենակարևոր գործոնն է: Սոցիալական մանկավարժության մեծագույն ներկայացուցիչ Էմիլ Դյուրքհեյմը (1858-1917), աշակերտին շրջապատող միջավայրի ազդեցությանը առաջնային տեղ տալով՝ նշում է, որ դաստիարակության ամենանպատակահարմար միջավայրն այն է, որտեղ ձևավորվում և կայանում են անձի բարոյական ուժերը: Նա ընդգծում է, որ դաստիարակության գործընթացի կառավարումը պետք է իրականացվի իրավական չափաբաժնով՝ երեխայի ՛՛կույր հնազանդության՛՛ բացառմամբ: Ժամանակակից դպրոցում բազմակարծիք , ներառական և մասնակցային արժեքային միջավայրի կազմակերպման և ստեղծման գործընթացը Դպրոցի տնօրենի կառավարչական կարևորագույն գործառույթներից մեկն է:

Հայաստանի Հանրապետությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթությունը կարգավորվում է «Կրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներով: Ներառականության պարագայում ԿԱՊԿՈՒ երեխան դառնում է իրավահավասար բոլոր երեխաների հետ: Երեխայի ընտանիքը դադարում է խուսափել իր երեխայի՝ միջավայրի հետ շփումից, քանի որ նույն միջավայրը հանդուրժողականությամբ է վերաբերվում իր երեխային՝ ընդունելով վերջինիս հավասար լինելու փաստը:

Դպրոցում սովորում է մեկ ԿԱՊԿՈՒ երեխա ՝ գնահատված խորը : Նրա կարիքները վկայագրված են: ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման կազմակերպումը Դպրոցում իրականացվում է հետևյալ սկզբունքներով.

- ✓ Աշխատակազմն արդիականացնում է իր գիտելիքներն ու հմտությունները ներառական կրթության ոլորտում վերապատրաստումների, համագործակցության Շիրակի ՏՄԱԿ, ինքնակրթության միջոցով
- ✓ Անհատական ուսումնական պլանները մշակվում են ՝ համաձայն հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի

առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարվորությունները, ձեռքբերումներն ու առաջընթացը

- ✓ Դասվարը և տնօրենը գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում համապատասխան քայլեր
- ✓ ԿԱՊԿՈՒ աշակերտը հավասարապես մասնակցում է դպրոցի և դասի բոլոր գործընթացներին՝ ըստ իր կարողությունների առավելագույն աստիճանի

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Դպրոցում պաշտպանված են թե աշխատողների, և թե աշակերտների ազատ խոսքի, մտքերի արտահայտման, սեփական կարծիքի դրսևորման իրավունքները 2.Դպրոցի անձնակազմը աշխատում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտում 3.Աշխատակիցները գիտեն, որիրենց գաղափարներն ու առաջարկությունները կքննարկվեն: Տնօրենությունը օգնում է աշխատակիցներին սովորել որոշումներ ընդունել, դժվար իրավիճակներում աջակցություն է ցուցաբերում 4.Դպրոցը խրախուսում է ավելի շուտ անկախ և ստեղծագործական վարքագիծը, քան հարմարվողականը 5.Ֆիզիկական միջավայրը մաքուր է, հիգիենայի պահանջներին համապատասխան 6.Դպրոցն ապահովում է բոլոր սովորողների հավասար մասնակցություն ուսումնառության գործընթացին, բոլոր սովորողների համար կրթության արդյունքներին հասնելու և առաջադիմության ցանկալի մակարդակը՝ նրանց կարիքներից, կարողություններից և սոցիալական կարգավիճակից անկախ 7. Անընդհատ ուշադրության կենտրոնում է յուրաքանչյուր աշակերտի վարքագիծը, միջավայրի և ընտանիքի ազդեցությունը այդ վարքագծի վրա, կարևորվում է բարոյական արժեքների զարգացումը՝ սովորողների մեջ սերմանելով ազնվություն, հարգանք, կարեկցանք	1.ԿԱՊԿՈՒ երեխաների համար բազմամասնագիտական թիմի բացակայություն, ոչ լիարժեք հարմարեցումներ 2.Երբեմն գնահատման սուբյեկտիվություն,

8.Դպրոցը խրախուսում է աշակերտների նախասիրությունները, զարգացման անհատական դրսևորումները 9. Կազմակերպվում են առարկայական և թեմատիկ միջոցառումներ, որոնք նպաստում են արժեհամակարգային դաստիարակությանը 10. Իրականացվում են հալածանքի դեպքերի բացահայտման և կանխարգելման աշխատանքներ 11. Դպրոցում հարգում են աշակերտի անհատականությունը՝ անկախ նրա տարիքային և անձնային առանձնահատկություններից, դավանանքից, լեզվից, սոցիալական ծագումից, ֆիզիկական կարողություններից	

ՆՊԱՏԱԿ

1. Ունենալ առողջ, համերաշխ կրթական միջավայր՝ համագործակցված ուժերով աշխատակազմ-աշակերտ-ծնող
2. Սովորողների կրթական, առողջապահական, սոցիալական իրավունքների պաշտպանություն

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Մանկավարժական խորհրդի հաստատմանը ներկայացնել մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները

2.Աշակերտի վարքագծի կանոններ սահմանել՝ չափորոշչային պահանջներին համապատասխան: Դրանց կազմմանը մասնակից դարձնել աշակերտներին

3.Սահմանել դասարանական կանոններ՝ ելնելով բազմահամակազմ դասարանի առանձնահատկություններից

4.Մշտադիտարկման կենտրոնում պահել Դպրոցի բարոյահոգեբանական միջավայրը՝

- ✓ Ուսուցչի վերաբերմունքը աշակերտի նկատմամբ
- ✓ Անաչառությունը
- ✓ Բարձր էթիկան
- ✓ Հավասարության ապահովումը

5.Կրթական բոլոր սուբյեկտների համար ապահովել ազատ կարծիք արտահայտելու իրավունքը, առաջարկների միջավայր
6.Բացառել հալածանքի, արհամարհանքի դեպքերը
7.Յուրաքանչյուր գնահատական և աշակերտի բնութագրում հիմնավորել:

1.9 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Կրթության գործում Դպրոցն արժևորում և կարևորում է մանկավարժի և ուսումնաօժանդակ և տնտեսական աշխատողների դերը: 2. Դպրոցն ունի չորս աշխատակից, որոնք իրենց պարտականությունները կատարում են բարեխղճորեն, պատասխանատվության մեծ զգացումով: 3.Դպրոցը հնարավորությունների սահմաններում խրախուսում է շնորհակալագրերի, դրամական խրախուսանքի տեսքով աշխատակիցներին 4.Դպրոցում և համայնքում ստեղծված է ուսուցչի նկատմամբ հարգանքի և վստահության մթնոլորտ, պաշտպանված է ուսուցչի իրավունքները 5.Տնօրենությունը հետևողական է ուսուցչին ներառելու ինքնակրթության բոլոր հարթակներում 6. Տնօրենն ապահովում է Դպրոցի աշխատակազմին բոլոր անհրաժեշտ պայմաններով՝ աշխատանքն արդյունավետ և պահանջներին համապատասխան կատարելու համար	1.Ինքնակրթման և ինքնակատարելագործման գործում ինքնուրույն նախաձեռնության պակաս 2. Կադրերի պակասը որոշ չափով ուսուցչին տանում է լճացման

ՆՊԱՏԱԿ

1. Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների նոր գործիքակազմի ստեղծում

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Կազմել և գործածության մեջ դնել ինքնագնահատման հարցաշարեր

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տարեկան ներքին ինքնագնահատման արդյունքների հիման վրա ստեղծել նյութական խրախուսման մեխանիզմներ
2. Գործածության մեջ դնել ինքնագնահատման հարցաշարեր
3. Արժևորել աշխատակազմի ձեռքբերումները՝ կիրառելով խրախուսման համապատասխան ձևեր
4. Ապահովել ուսուցչի մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին, որից հետո դիտարկել ձեռք բերած հմտությունները գործողության մեջ

1.10. Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից

Ինչպես գիտենք դպրոցի բյուջեի նախագծման, հաշվետվողականության և հանրայնացման գործառույթների անմիջական պատասխանատուն հանդիսանում է դպրոցի տնօրենը: Հանրակրթական դպրոցների կայքէջերի գործարկումը մեծապես նպաստել է դպրոցների ֆինանսական գործունեության հանրայնացմանը: Դպրոցի բյուջեի ծախսերն ունեն հետևյալ հիմնական ուղղությունները.

1. Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
2. Եկամտահարկի վճարներ

Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում, որպես կանոն, չեն փոփոխվում:

Բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում սովորաբար նվազեցվում են,կամ ընդհանրապես չեն լինում/.

- ✓ Գրասենյակային և տնտեսական ծախսեր
- ✓ Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր /այս ուղղություններով
- ✓ Կապի ծառայությունների ծախսեր
- ✓ Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր Կոմունալ ծառայությունների վճարներ

Ոլորտի խնդիրները կարգավորելու նպատակով անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել դպրոցի բյուջետային հատկացումները ավելացնելու և այլ միջոցներ հայթայթելու ուղղությամբ, զարգացնելու տնօրենի և հաշվապահի կարողությունները՝ դպրոցի բյուջեում ֆինանսական մուտքերը և դրանց փոփոխությունները կանխատեսելու, նախահաշիվ կազմելու, ֆինանսական միջոցները նախահաշվին համապատասխան ծախսելու, հաշվետվություններ կազմելու համար:

Զարգացման ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

- ✓ Պետական բյուջե
- ✓ Արտաբյուջետային միջոցներ
- ✓ Բարերարներ և նվիրատուներ
- ✓ Հասարակական կազմակերպություններ
- ✓ Ծնողներ

ԲՅՈՒՋԵ	2021թ.	2022թ.
Տարեկան ֆինանսավորում/սուբսիդիա տարրական,որից սնունդ	9837,8 551,2	6872,2 210,0
Տարեսկզբի մնացորդ	1116,5	3763,2
Այլ եկամուտներ/տարածքի վարձակալություն/	0	0
Դրամաշնորհ/տարակարգ ստացած ուսուցիչներ	22,4	0
Տրանսպորտային ծախսեր	68,0	68,8
Տարեվերջի մնացորդ	3763,2	2010,3

	2018-2019	2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023

Ֆինանսական ցուցանիշներ	8494.3	8652.8	10440.6	6940.2	7591.0

Բյուջեի ծախսերի հիմնական ուղղությունները	**Ծրագրային 2021**	**Փաստացի ծախս 2021**	**Ծրագրային 2022**	**Փաստացի ծախս 2022**
Աշխատավարձ և հավելավճարներ	9291.5	6484,1	8238.4	7355.9
Կապի ծառայություններ	0	0	0	0
Էներգետիկ ծառայություններ	301.0	118,85	300.0	117,5
Կոմունալ ծառայություններ	36.0	36,0	36.0	36,0
Գրասենյակային նյութեր	120.0	120,0	150.0	100,0
Կենցաղային և հանրային նյութեր	551.2	34,8	210.0	122.8
Հատուկ նպատակային այլ նյութեր	60.0	59,0	300.0	297.9
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	290.0	288,4	0	0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	43.0	42,0	93.0	92.9
Աշխատողների մասնագիտական զարգացման ծառայություններ	22.4	22,4	0	0
Այլ տրանսպորտային ծախսեր	68.0	67,8	68.0	68.0
Պարտադիր վճարներ	8.1	8,1	8.1	3,0
Տեղեկատվական ծառայություններ	0	0	0	0
Այլ ծախսեր/դասագիրք/	0	0	0	
Վարչական սարքավորումներ	0	0	500.0	499.0

ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ներդպրոցական վերահսկողությունը դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի համակարգված վերլուծությունն է, որը հնարավորություն է տալիս գործընթացը տեսնել թափանցիկ և ճշգրիտ, անհրաժեշտության դեպքում կատարել թերությունների և անճշտությունների արագ շտկում:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին մանկավարժական խորհրդի նիստում քննարկվում և կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացվում հաստատության ներքին կարգապահական կանոնները, այդ թվում հաստատության աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները: 2.Վարչական և մանկավարժական աշխատողները ունեն, կիսամյակային (տարեկան)աշխատանքային պլան և յուրաքանչյուր կիսամյակի վերջում ներկայացնում են հաշվետվություններ 3.Ուսուցիչն ունի առարկայական թեմատիկ պլաններ, դասի է ներկայանում օրվա դասի պլանով 4.Մշտապես վերահսկվում է դասվարի ուսումնական և դաստիարակաչական աշխատանքները: 5.Տնօրենության կողմից տրվում են գրավոր աշխատանքներ՝ գիտելիքների ստուգման նպատակով: Տնօրինության նախաձեռնությամբ դպրոցում անց են կացվում ստուգարքներ, տարաբնույթ միջոցառումներ, որոնք աշխուժություն են հաղորդում ուսումնական գործընթացին, սովորողներին մղում ինքնազարգացմանը: 6.Պարտադիր ստուգվող առարկաներն են մայրենին և մաթեմատիկան, իսկ մնացած առարկաներն ըստ հաստատված ժամանակացույցի:	1. Տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքում ցածր առաջադիմություն:

7.Մշտապես անցակացվում են ընթերցանության որակի ստուգումներ:	

ՆՊԱՏԱԿ

1. Ունենալ դպրոցում ուսումնադաստիարակչական վիճակի մասին ամբողջական և համակողմանի տեղեկատվություն

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Դպրոցի բոլոր պլանների կատարման մշտական վերահսկողություն
2. Ուսուցչի աշխատանքի վերահսկում
3. Սովորողների կողմից գիտելիքի յուրացման գործընթացի վերահսկողություն

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Վերահսկել հաճախումների հաշվառման, մատենավարության աշխատանքները
ա/վերահսկել բոլոր տեսակի պլանների պատշաճ և ժամանակին կատարումը՝ դասվարի տարեկան աշխատանքային պլանը,
բ/հաստատել ու վերահսկել հերթապահության կարգը

2.Ծանոթանալ ուսուցչի մասնագիտական պարտականությունները նկարագրող փաստաթղթերին, ուսումնական ծրագրերին
ա/դասավանդվող առարկայի արդյունքների մշտական վերահսկում
բ/ուսուցիչների փորձի ուսումնասիրություն
գ/ առարկայական ծրագրերի կատարողականների պարբերական ստուգում
դ/կատարել ուսուցիչների աշխատանքի մշտադիտարկում
3.Առանձին առարկաներից ձեռք բերված գիտելիքների արդյունքները ամփոփելու նպատակով անցկացնել ստուգարքներ
ա/ուսումնասիրել աշակերտների ընդգրկվածությունը ուսումնական գործընթացում
բ/ուսումնասիրել հոգեբանական մթնոլորտը դասարաններում
գ/ուսումնասիրել աշակերտների և ուսուցիչների համագործակցությունը
դ/ուսումնասիրել ուսման նկատմամբ վերաբերմունքը
ե/ վերահսկողության արդյունքում հայտնաբերված խնդիրների լուծման համար ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

Նշված բոլոր խնդիրներն ունեն լուծման կարիք, համապատասխան գործողությունների միջոցով, ինչը հնարավոր եմ համարում առաջիկա հինգ տարիների ընթացքում.

1. Ակտիվ համագործակցելով մարզային և քաղաքային իշխանությունների հետ:
2. Համագործակցելով տարբեր ՀԿ-ների հետ և մասնակցություն տարբեր ծրագրերի:
3. Ակտիվ համագործակցելով ծնողական համայնքի հետ, հնարավորության դեպքում կամավորության սկզբունքով օգտագործելով ծնողների ֆիզիկական ներուժը բարեկարգման աշխատանքներին:
4. Խնդիրները փորձել ինչ-որ չափով լուծել նաև տնտեսումների և բյուջեյի ճիշտ պլանավորման հաշվին:
5. Հնարավորության սահմաններում փնտրել և գտնել հովանավորներ :

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հանրակրթություն իրականացնելիս դպրոցի տնօրենը անվերապահորեն պետք է դրևորի հետևյալ հատկանիշները և սկզբունքները՝

- ✓ Իրավիճակային գործունեության ճկունություն,
- ✓ Պատասխանատվության բարձր զգացում և հետևողականություն
- ✓ Արդարամտություն
- ✓ Համագործակցության պատրաստակամություն
- ✓ Ստեղծագործական մտածողություն
- ✓ անձնակազմի յուրաքանչյուր անդամի կարևորության ընդգծում

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի տնօրենի վարած կադրային ճիշտ քաղաքականությունը առանցքային դերակատարություն է ունենում անձնակազմի կառավարման գործում: Դպրոց մտնող յուրաքանչյուր ուսուցիչ և մանկավարժական աշխատող պետք է լինի պարտաճանաչ, օրինակելի, կարգապահ: Իհարկե անհրաժեշտ է հստակ գիտակցել, որ անձնակազմի կառավարման գործընթացների արդյունավետությունը բացառապես պայմանավորված չէ դպրոցի տնօրենի վարած քաղաքականությամբ: Այնուհանդերձ, տնօրենի կողմից անհրաժեշտ է հետևողական քայլեր ձեռնարկել անձնակազմի կառավարման գործընթացները առավել բարելավելու ուղղությամբ, ինչը ենթադրում է հետևյալ միջոցառումների իրականացում՝

1. Անձնակազմի գործունեության խրախուսում /պաշտոնական աճ, մասնագիտական վերապատրաստումներ, տարակարգի ստացում, կամավոր ատեստավորում, մասնագիտական և կազմակերպական խրախուսում

2.Ոլորտի լավագույն մասնագետների հետ փորձի փոխանակման և վերապատրաստան միջոցառումների իրականացում:

3.Մանկավարժական անձնակազմի պարբերաբար վերապատրաստում

4.Կադրերի համալրում՝ ելնելով անձնակազմի երիտասարդացման օբյեկտիվ անհրաժեշտությունից:

5.Սահմանված կարգով մանկավարժական անձնակազմի ատեստավորում:
6.Մանկավարժների աշխատանքի որակի գնահատման ուսումնասիրությունների իրականացում ՝ տարեկան կտրվածքով:

Վերը նշված բոլոր կետերը փոխկապակցված են և լրացնում են միմյանց և որևէ ուղղությամբ միջոցառումների բացակայությունը կարող է վնասել՝ շղթայաբար կապակցված այս միջոցառումների արդյունավետությանը:

Աշակերտների առողջության պահպանում

Դպրոցական ոչ մի տարիքում ուսումնական գործունեությունն այնպես սերտ կապի մեջ չի գտնվում առողջության վիճակի և ֆիզիկական զարգացման հետ, ինչպես կրտսեր տարիքում:

Տարրական դասարաններում մանկավարժական աշխատանքի ճիշտ կազմակերպմամբ և կրտսեր դպրոցականի անատոմիական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունների հաշվառմամբ հնարավոր է ապահովել երեխայի ֆիզիկական ու մտավոր զարգացման ճիշտ ընթացքը: 6-10 տարեկանում երեխայի զարգացումն ընթանում է համեմատաբար համաչափ /հասակը, քաշը, դիմացկունությունը, գլխի չափը, թոքերի կենսական տարողությունը և այլն/: Նախադպրոցական տարիքի համեմատ այս փուլում դանդաղում է հասակի աճը և ավելանում է քաշը, ոսկրային համակարգը դեռևս գտնվում է ձևավորման փուլում: Ողնաշարի, կրծքավանդակի, կոնքի, վերջույթների ոսկրացումն այս տարիքում դեռևս ավարտված չէ. ոսկրային համակարգում շատ կրճիկային հյուսվածքներ կան: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է մշտապես հոգալ աշակերտի մարմնի ճիշտ դիրքի, կեցվածքի, բայլվածքի ուղղությամբ: Այս տարիքում ակտիվորեն զարգանում է երեխայի մկանային համակարգը, հատկապես՝ ձեռքերի մանր մկանները, մատների ֆալանգները, մատները ձեռք են բերում ճկունություն, որն իր հերթին նպաստում է գրավոր աշխատանքների կատարման գործընթացի արդյունավետությանը: Կրտսեր դպրոցական տարիքում շարունակում են զարգանալ երեխայի Նյարդային համակարգը, գլխուղեղի կիսագնդերի գործառույթները: Տեղի է ունենում ուղեղի կենտրոնների գործառույթների կատարելագործում, աստիճանաբար փոփոխվում է գրգռման և արգելակման գործընթացների փոխադարձ պայմանավորվածությունը: Գլխուղեղի արգելակման գործընթացն ավելի է ուժեղանում, սակայն առաջվա նման գերիշխում է գրգռման գործընթացը՝ կրտսեր դպրոցականին դարձնելով չափազանց դյուրագրգիռ:

Աշակերտների առողջության պատշաճ պահպանումը ապահովելու ուղղությամբ նախատեսվում է

1. Մշտապես հատուկ ուշադրության կենտրոնում պահել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մարմնակրթության և ֆիզիկական դաստիարակության խնդիրները:
2. Մանկական հիվանդությունների կանխարգելման նպատակով համագործակցել համայնքային բժշկական հաստատության հետ:
3. Բացառել անորակ սննդի մուտքը դպրոց:
4. Դասվարի հետ պարբերաբար քննարկել դասարանական և տնային աշխատանքներին հատկացված ժամաքանակի ռացիոնալ չափերի ապահովումը
5. Միշտ ուշադրության կենտրոնում պահել կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված սովորողներին, կտրուկ վարքային փոփոխության ենթարկված երեխաներին
6. Դասվարի հետ հաճախակի կազմակերպել կանխարգելիչ միջոցառումներ՝ ուղղված դժբախտ պատահարներից պաշտպանվելու երեխաների կարողությունների ձևավորմանը
7. Ապահովել ՀՀ օրենքի պահանջը՝ պարտադիր պրոֆիլակտիկ զննության անցկացման մասին

ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Ըստ հանրակրթական պետական կրթակարգի՝ տարրական դպրոցի հիմնական նպատակը սովորողի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է: Ընդհանուր ձևակերպմամբ՝ տարրական դպրոցի գերխնդիրը ոչ թե սովորողներին գիտելիքներով զինելն է, այլ անձի կարողությունների ու հմտությունների որոշակի համակարգի և վարքագծային նորմերի ձևավորումը: Դա նշանակում է՝ սովորողների կողմից առանձին առարկաներից անգամ բավականաչափ հարուստ գիտելիքների յուրացումը դեռևս չի կարող ապահովել զարգացման և դաստիարակության գործընթացի լիարժեք կայացումը:

Դաստիարակությունը հանրակրթության կարևոր բաղադրիչներից է այն երեխայի ընկալումն է շրջապատող իրականության հանդեմ, նրա հարաբերություններն է իր և շրջապատող մարդկանց հետ: Ուսուցման ու դաստիարակության գործընթացը

կիրականացվի լիարժեք, եթե հաշվի առնվեն սովորողների զարգացման տարիքային առանձնահատկությունները:
Կրտսեր դպրոցի դաստիարակչական գործունեության գլխավոր խնդիրներից է աշակերտների և նրանց շրջապատող մարդկանց (ընկերներ, ծնողներ, ուսուցիչներ, բարեկամներ և այլք), շրջակա միջավայրի (բուսական և կենդանական աշխարհ), ինչպես նաև հոգևոր արժեքների միջև շփման մշակույթի ձևավորումը: Վերոհիշյալ խնդիրների լուծման միջոցներն են ծնողական ժողովները, հանդիպումները, իրադրային և շարժական խաղերը, թատերականացված բեմականացումները, զրույցները, քննարկումները, մրցույթները, կրտսեր դպրոցականների աշխատանքների ցուցահանդեսները, էքսկուրսիաները և այլն:

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ տարրական դասարաններում են ձևավորվում սովորողների այնպիսի որակներ, ինչպիսիք են համագործակցելը, աշխատասիրությունը, ինքնուրույնությունը, հաղորդակցումը, հետաքրքրասիրությունը, կազմակերպվածությունը, ազնվությունը և այլն:

Ակնկալվում է, որ նշված միջոցառումները կնպաստեն ոչ միայն նրանց հաղորդակցման մշակույթի ձևավորմանը, այլև ինքնաճանաչման, ինքնաարտահայտման և ինքնագնահատման հմտությունների, ինքնուրույնության մշակմանը:

Դաստարակչական համակարգի նպատակն է՝

1.Սովորողի մեջ ձևավորել հայրենասիրություն, մարդասիրություն, հարգալից վերաբերմունք հայոց լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրողը, պահպանողը և փոխանցողը:

2.Ձևավորել հարգանք ազգայինի և համամարդկայինի նկատմամբ:

3.Յուրաքանչյուր անհատի մոտ ստեղծել ինքնակատարելագործման ներքին պահանջ:

Դաստիարակչական համակարգի կատարելագործմանն ուղղված աշխատանքները կլինեն արդյունավետ, եթե ծնողները հավասարապես համագործակցեն ուսուցիչների հետ և ստանձնեն պատասխանատվություն իրենց երեխաների դաստիարակության խնդիրը լուծելու գործում:

Դպրոցում դաստիարակչական համակարգի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

1.Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում։

2.Ամրապնդել ծնողական և աշակերտական խորհուրդների կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումն ու տարածումը։

3.Մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել դպրոցի դաստիարակչական միջավայրը և բացահայտել առկա խնդիրներն ու բացթողումները, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ։

4.Անհրաժեշտ է համագործակցել հոգեբանամանկավարժական վերապատրաստում իրականացնող մարմինների հետ, որի գործունեության արդյունքում կբարելավվեն և կամրապնդվեն մանկավարժ-ԿԱՊԿՈՒ աշակերտ, աշակերտ-ԿԱՊԿՈՒ աշակերտ փոխհարաբերությունները, ինչպես նաև հատուկ մանկավարժական միջոցառումներ կազմակերպել դժվար դաստիարակվող երեխաների հետ։

5.Բոլոր աշխատանքները պետք է նպատակաուղղված լինեն սովորողի մոտ արժեհամակարգի ձևավորմանը, որի արդյունքում նա կլինի ազգային արժեքների կրողը, պահպանողը և փոխանցող։

6.Դասղեկական ժամերի և արտադասարանական միջոցառումների միջոցով իրականացնել մարդասիրական, բարոյական, հայրենասիրական, գեղագիտական, աշխատանքային, բնապահպանական և այլ դաստիարակչական ծրագրեր։

Հայրենասիրական դաստիարակություն

Հայրենասիրությունը դառնում է բնավորության մասնիկ, երբ ընտանիքում, դպրոցում այն բարձր հիմքերի վրա է դրված։ Հզոր, ուժեղ, ամուր պետություն ունենալու համար անչափ կարևոր է վաղվա քաղաքացիներին հայրենասիրական ոգով կրթելն ու դաստիարակելը։

Պետության և նրա բաղկացուցիչների նկատմամբ դպրոցում հարգանքի ու ակնածանքի արմատավորումը, քաղաքացիական վարքի մշակույթի ձևավորումը, հասարակական, պետական շահերի գերակայության հաստատումը անձնական շահի նկատմամբ։ Ցանկացած սովորող դպրոցից պետք է դուրս գա իբրև քաղաքացի, ով գիտակցում է իր տեղն ու դերը պետության կայացման գործում, իսկ այդ գիտակցմանը մարդը հասնում է , երբ ծանոթանում է իր պատմությանը, գրականությանը, մշակույթին։ Դառնում է դրա կրողը և հստակ գիտի ազգային արժեքների նպատակային պահպանման և տարածման անհրաժեշտության մասին։

Սկսած տարրական դասարաններից՝ երեխան պիտի ծանոթ լինի ՀՀ դրոշին, զինանշանին, պետք է անգիր իմանա օրհներգը: Պետք է իմանա մեր երկրի պետականության կայացման գործում եկեղեցու և բանակի կարևորության մասին, պետք է տիրապետի հայոց լեզվին, իսկ արդեն դպրոցի ավագ օղակում աշխատի խոսել գրական հայերենով: Դպրոցը պետք է ձևավորի քաղաքացի, ով հարգանք և ակնածանք կդրսևորի սեփական ազգի, պետության նկատմամբ և կկարողանա հասարակական, պետական շահը գերադասել անձնական շահից: Ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ կազմակերպել հանդիպումներ հերոսների հետ, կազմակերպել հայրենասիրական ֆիլմերի դիտումներ:

Զարգացման ծրագրի այս հատվածում արտացոլված միջոցառումները նպատակաուղղված են՝

- ✓ սովորողների մոտ արմատավորել ազգային ավանդույթների և հաղթանակների նկատմամբ հարգանքը և հպարտության զգացումը,
- ✓ կրտսեր դպրոցականի անձի ամբողջական ձևավորմանը՝ հաշվի առնելով նրա համակողմանի և ներդաշնակ զարգացման նպատակը
- ✓ կրտսեր դպրոցականներին հաղորդակից դարձնել հասարակական, հոգևորբարոյական, ազգային և համամարդկային արժեքներին, գիտությանը, արվեստին, մշակույթին
- ✓ ձևավորել կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումները
- ✓ զարգացնել ինքնահարգանքի, սեփական բարձրարժեքության գիտակցումը, դաստիարակել բարյացակամ վերաբերմունք շրջապատի մարդկանց /թե մեծերի, թե տարեկիցների/նկատմամբ, մշակել մարդկանց հետ վստահելի հարաբերություններ ստեղծելու, երկխոսություն ու հաղորդակցում վարելու կարողություններ
- ✓ պահպանելու և տարածելու ՀՀ պետական խորհրդանիշերի (զինանշան, դրոշ, օրհներգ) բովանդակությունն ու նշանակությունը՝ սկսելով այս գործընթացը տարրական դպրոցից. դպրոցի յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա օրհներգը,
- ✓ բարձրացնելու աշակերտների՝ ազգային շահերի պաշտպանության ձևավորմանը նպատակաուղղված ռազմահայրենասիրական

դաստիարակությունը՝ միաժամանակ սերմանելով հանդուրժողական և հարգալից վերաբերմունք այլ ազգերի և կրոնների նկատմամբ,

- ✓ նպաստելու հայի ինքնության ամրապնդմանը նպաստող գործողությունների իրականացմանը ,
- ✓ յուրաքանչյուր սովորողի մոտ արմատավորելու սեփական ազգի պատմության ու պետության կայացման գործում իր մասնակցության կարևորությունն ու դրա իրական հնարավորությունը.
- ✓ նպաստելու դպրոցում հայրենասիրական դաստիարակության համակարգի կայացմանը, դրա արդյունավետ գործունեության մշտական կատարելագործմանը:

ԸՆՏԱՆԻՔ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Երեխաների դաստիարակության գործում ընտանիքի՝ որպես անձի սոցիալականացման առաջնային օղակի ունեցած կարևոր դերն անժխտելի է։
Տարրական դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքի ճիշտ դրվածքի համար անպայման պետք է իմանալ, թե ինչպես է դաստիարակվում երեխան ընտանիքում, ինչպիսի գործնական հմտություններով է առաջին անգամ մտել դպրոցական միջավայր, որոնք են երեխային շրջապատող մարդկանց դաստիարակչական ներգործությունների թույլ և ուժեղ կողմերը, համաձայնեցվում է արդյոք ընտանեկան դաստիարակությունը դպրոցում իրականացվող դաստիարակության սկզբունքների ու մեթոդների հետ, ինչպես է ծնողների միջոցով իրականացվում դպրոցի ազդեցությունը երեխաների վրա:
Դպրոցի և ընտանիքի ընդհանուր ջանքերն այն դեպքում ցանկալի արդյունքների կհասնեն, երբ ընտանիքն իմանա, ինչ է անում դպրոցը, իսկ դպրոցն էլ, թե ինչ պայմաններում և ինչպես են դաստիարակվում երեխաներն ընտանիքում։ Ծնողների հետ այդպիսի շփումների բացակայության դեպքում ուսուցիչները հաճախ դժվարանում են աշակերտների հետ իրենց աշխատանքում, չեն կարողանում նրանց նկատմամբ գտնել ճիշտ մոտեցում, թույլ են տալիս սխալներ:

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավումը նպատակ ունի՝

1.Ուսուցման ցանկալի արդյունքների համար բարձրացնել սովորողների ծնողների պատասխանատվությունը։

2.Բարձրացնել ընտանիք-դպրոց փոխադարձ վստահության մակարդակը։

Այդ նպատակով անհրաժեշտ է

- ✓ Ավելի արդյունավետ դարձնել ընտանիք-դպրոց համագործակցությունը
- ✓ Բարձրացնել փոխադարձ վստահության մակարդակը
- ✓ Ծնողներին ակտիվորեն ներգրավել դպրոցի գործունեության մեջ
- ✓ Դասղեկների միջոցով տեղեկանալ սովորողների ընտանիքների առաձնակի դժվար պայմաններին, միայն հաշմանդամ կամ գործազուրկ ծնողի խնամքի տակ ապրող երեխաների մասին
- ✓ Պարբերաբար հրավիրել ծնողական ժողովներ և հանդիպումներ դպրոցի անձնակազմի հետ
- ✓ Խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողներին

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավման համար անհրաժեշտ է

1. Պարբերաբար տունայցերի միջոցով ծանոթանալ և տեղեկություններ հավաքել ընտանիքի փաստացի վիճակի մասին
2. Կազմակերպել անհատական զրույցներ և խորհրդատվություններ ծնողների համար,
3. Ամրապնդել ծնողական խորհրդի կապը մանկավարժական և կառավարման խորհուրդների հետ

ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՀԵՏ

Մանկավարժի մասնագիտական պատրաստականության և հմտությունների մակարդակով է պայմանավորված աճող սերնդի կրթվածության ցուցանիշը, արժեհամակարգը: Ուսուցման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է այդ գործընթացի պլանավորման, կազմակերպման, գիտելիքների փոխանցման հարցերում ուսուցչի կարողունակությամբ:
Անընդհատ փոփոխվող ժամանակակից դպրոցն զգում է կոմպետենտ, մրցունակ այնպիսի մանկավարժների կարիք, ովքեր ունակ են ստեղծագործաբար լուծել մասնագիտական խնդիրները, ինքնուրույն հայթայթել գիտելիքներ, կիրառել դրանք և ձևավորված մանկավարժական կարողություններով պատրաստ կլինեն մասնագիտական շարունակական կատարելագործման: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ստեղծել այնպիսի միջավայր և հարաբերությունների մակարդակ, որտեղ մանկավարժն իրեն կզգա արժևորված և գնահատված, և այդ գիտակցումը մանկավարժին կմղի անձնային և մասնագիտական շարունակական աճի:

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի նպատակն է՝

1. Դպրոցում ապահովել յուրաքանչյուր մանկավարժի համար հարմարավետ ստեղծագործական միջավայր

2. Խրախուսել մանկավարժներին՝ սեփական գիտակրթական նյութերը ներկայացնելու, հետազոտական աշխատանքներ կատարելու համար՝ ապահովելով նրանց մասնագիտական աճը

3. Տարածել առաջավոր մանկավարժական փորձը դասալսումների վերլուծության, մանկավարժական գիտաժողովների, կոնֆերանսների, միջոցառումների միջոցով :

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

1.ուսուցիչների հետ աշխատանքում առավել շեշտադրել դասավանդման նոր մեթոդների կիրառումը

2.կրթվելու և ինքնակրթվելու ցանկության առկայություն

3.շարունակաբար իրականացնել ուսուցիչների միջև համագործակցության մթնոլորտի կատարելագործմանը նպաստող գործողություններ

4.անընդհատ մոնիթորինգի ենթարկել դպրոցի տնօրենի կողմից դպրոցի մանկավարժների հետ տարվող անհատական աշխատանքների որակն ու սահմանված սկզբունքների համապատասխանությունը

5.մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել և գնահատել օբյեկտիվորեն զարգացման ծրագրում նշված նպատակների իրագործմանն ուղղված աշխատանքները

6.փորձի փոխանակում պարբերաբար անցկացվող դասալսումների միջոցով

7.ցանկացած վերապատրաստումից, սեմինարից, կոնֆերանսից, դասընթացից հետո, դրան մասնակցած ուսուցիչը, անպայման մանկավարժական աշխատակազմին պետք է ներկայացնի իր իմացածը սեմինար քննարկումի միջոցով

8.մանկավարժների համար դպրոցում ստեղծել տեղեկատվության մի համակարգ, որը հնարավորություն կտա մշտապես համալրել գիտելիքները հետևյալ ուղղություններով՝

ա/դպրոցի և կրթության նկատմամբ նոր պահանջներ բ/հոգեբանություն և մանկավարժություն
գ/ժամանակակից մանկավարժական նվաճումներ
դ/առաջավոր մանկավարժական փորձ

ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Առկա հիմնախնդիրներ	Հիմնախնդիրների լուծման գործողություններ	Պատասխանատուներ	Կատարման ժամանակացույց
1.Դպրոցի շենքային պայմանների ստեղծում կամ տնակային կառույցի քարապատում	Դիմել պետության աջակցությանը, գտնել հովանավորներ	Տնօրենություն Վարչատնտեսական համակարգող	2023-2028
2.Մարզագույքի ձեռքբերում, սպորտի նկատմամբ հետաքրքրության աճ	Ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման միջոցով, ստեղծված տնտեսումներով ձեռք բերել մարզագույք	Տնօրենություն Վարչատնտեսական համակարգող	2023-2024
3.Դպրոցի բակի բարեկարգում, կանաչապատում	Ցանկապատել Դպրոցի տարածքը, բարեկարգել, կանաչապատել՝ այդ աշխատանքներում ներգրավելով համայնին և ծնողներին:	Տնօրեն, համակարգող, համայնքի վարչական ղեկավար	2023-2024
4.Նյութատեխնիկական բազայի հարստացում	Դպրոցի գույքի, կահավորանքի նորացում, համալրում	Տնօրենություն վարչատնտեսական համակարգող	2023-2027

5. ԿԱՊԿՈՒ աշակերտների համար ուսուցման և ուսմնառության գործընթացի մատչելիության , ներառականության և արդյունավետության ապահովում	Հարմարեցումների ապահովում	Տնօրենություն	2023-2028
6.Գեղարվեստական, մեթոդական գրականության ավելացում, դիդակտիկ նյութերի, պարագաների ձեռքբերում	Գրադարանային ֆոնդի համալրում, մատչելիության ապահովում	Տնօրենություն	2023-2025
7.Մանկավարժական համակազմի գործունեության բարելավում և կատարելագործում	Ուսուցչի շարունակական վերապատրաստում, պարտադիր և կամավոր ատեստավորման նախապատրաստում	Տնօրենություն	2023-2028
8.Ուսուցման գործընթացի վերջնարդյունքների ապահովման մշտադիտարկում	Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին համապատասխան գործողությունների միջոցով կատարել վերջնարդյունքների ստուգում	Տնօրեն	2023-2028
9.Հոգաբարձուների խորհրդի բացակայություն	Հոգաբարձուների խորհրդի ստեղծում	Տնօրեն	2023-2025
10.Դպրոցի մերձակա տարածքի բարեկարգում, կանաչապատում	Համայնքի և ծնողների ներգրավում բարեկարգման աշխատանքներին	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող	2023-2028

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշներ

Գնահատումը գործընթաց է, երբ սահմանված չափանիշներով գնահատման դատողություններ են արվում կատարված գործողությունների որակի նկատմամբ: Գնահատման չափանիշները ցուցիչներ են, որոնք ապահովում են գնահատման արդյունավետությունը, հավաստիությունը և օբյեկտիվությունը:

	ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ	ԱՐԴՅՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	ԱՐԴՅՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
1.	Ուսումնական հաստատության շենքային պայմանների և տարածքի արդիականացում	գերազանց	Աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով
		լավ	աշխատանքները կատարվել են մասնակի՝ նախատեսվածի 60%-ի չափով,
		բավարար	աշխատանքները կատարվել են մասնակի՝ նախատեսվածի 30%-ի չափով,
		անբավարար	Աշխատանքները չեն կատարվել
2.	Գույքի, նյութատեխնիկական բազայի ձեռքբերում	Գերազանց	Ամբողջությամբ ձեռք է բերվել նախատեսված գույքն ու նյութատեխնիկական բազան
		Լավ	նախատեսված գույքն ու նյութատեխնիկական բազան ձեռք է բերվել 60%-ի չափով
		Բավարար	նախատեսված գույքն ու նյութատեխնիկական բազան ձեռք է բերվել 30%-ի չափով
		անբավարար	նախատեսված գույքն ու նյութատեխնիկական բազան ձեռք չի բերվել
3.	Կրության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության չափանիշներ	գերազանց	Կրթության որակի և առաջադիմության չափորոշչային պահանջն իրականացվել է ամբողջությամբ՝դասի որակի գնահատում, արդյունքի գնահատում, դասալսման արդյունք՝ մշակված համապատասխան ձևաթղթեր

		լավ	Կրթության որակի և առաջադիմության չափորոշչային պահանջն իրականացվել է, ավարտին չի հասցվել, վերջնական գնահատական չի տրվել
		բավարար	Կրթության որակի և առաջադիմության չափորոշչային պահանջն իրականացնելու աշխատանքները մեկնարկել են, սակայն արդյունք չի գրանցվել
		անբավարար	կրթության որակի և առաջադիմության չափորոշչային պահանջն իրականացնելու աշխատանքներ չեն արվել
4.	Դպրոցում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծում	Գերազանց	Դպրոցում երաշխավորված է այլակարծությունը, անձնակազմի և սովորողների իրավունքների պաշտպանությունը, ուսումնական գործընթացում սովորողների ներառականությունը, ինքնաարտահայտման, ինքնադրսևորման միջավայրը, ազգային և համամարդկային արժեքների պահպանման և զարգացման հնարվորությունը
		Լավ	Դպրոցում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի խախտման հազվադեպ հանդիպող դեպքերը արագ կանխվում են
		Բավարար	Դպրողում սահմնապակված է այլակարծությունը, անձնակազմի և սովորողների իրավունքներն ու շահերը հաճախակի են անտեսվում, ներառական միջավայրը լիարժեք չէ, արժեքային համակարգը սովորողների պատկերացումներում աղավաղված է
		անբավարար	Դպրոցում այլակարծություն և

			սովորողների իրավունքների ու շահերի պաշտպանություն երաշխավորված չէ, ներառական և մասնակցային արժեքային միջավայր ձևավորված չէ:
5.	Դպրոցի աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորում	Գերազանց	Անձնակազմի արժևորումն ու խրախուսումը կատարվում է՝ ելնելով սահմանված չափանիշներց որակ, նախաձեռնողականություն, սովորողների արդյունքներ, խրախուսման համակարգը ինքնանպատակ չէ: Ձևավորված է անձնակազմի ինքնակրթության համար նպաստավոր միջավայր, անձանակազմը վերապատրաստումների մասնակցության գործում մեծ ակտիվություն է դրսևորում:
		Լավ	Անձնակազմի խրախուսման գործառույթը կատարվում է, սակայն երբեմն սուբյեկտիվ մոտեցումներով: Դպրոցում առկա է ինքնկրթության բավարար միջավայր
		Բավարար	Անձնակազմի խրախուսումը ամբողջովին կատարվում է առանց գնահատման չափանիշները հաշվի առնելու: Ինքնակրոթության բոլոր պայմաններն ապահովված չեն, հազվադեպ են սեփական նախաձեռնությունները
		անբավարար	Անձնակազմի խրախուսում և արժևորում չի իրականացվում:
6.	Համագործակցություն կառավարման և խորհրդակցական մարմինների հետ	գերազանց	Արդյունավետ համագործակցություն, որի արդյունքում լիարժեք լուծում են ստանում առաջ քաշված հարցերն ու խնդիրները, նիստերը պարբերական բնույթ են կրում, կառավարման և խորհրդակցական

			մարմինների բոլոր անդամներն ակտիվ և նախաձեռնող են, չկա անտարբերություն և պասիվություն
		Լավ	Տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարամինների համագործակցության արդյունքում առաջ քաշված հարցերն ու խնդիրները լուծում են ստանում, նիստերը կազմակերպվում են ոչ պարբերաբար, հաճախ մասնակցում են ոչ բոլոր անադամները
		Բավարար	Կառավարման և խորհրդակցական մարմինների հետ համագործակցությունը կատարվում է միայն տնօրենի նախաձեռնությամ՝ ելնելով աշխատանքային հրատապ հարցերից, խորհրդակցական մարմինների անդամների պասիվ են, իրենց դիրքորոշումը քննարկվող հարցերի վերաբերյալ հիմնականում չեն արտահայտվում, համաձայնում են տնօրենի առաջարկների հետ՝ առանց առարկությունների՝ որպես ունկնդիր
		անբավարար	Տնօրենի և կառավարման մարմինների միջև համագործակցությունը ձևական բնույթ է կրում, նիստեր չեն կազմակերպվում, հիմնականում չեն առնչվում Դպրոցի գործունեությանը, կառավարումը լինում է միանձնյա
7.	Դպրոց-համայնք, ծնողական համայնք համագործակցություն	գերազանց	Ձևավորված է փոխշահավետ ակտիվ համագործակցություն դպրոցի և համայնքի, ծնողական համայնքի միջև: ՏԻՄ և ծնողական համայնքն ակտիվ ներգրավված է

			Դպրոցի ուսումնադաստիակչական աշխատանքներում, արտադպրոցական միջոցառումներում, սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողներին տրամադրվող աջակցության, ԿԱՊԿՈՒ երեխաներին աջակցության ցուցաբերման գործում:
		լավ	ՏԻՄ-ի և ծնողական համայնքի հետ համագործակցությունն առկա է, սակայն դրսևորվում է ոչ մշտապես, այլ դպրոցի կողմից ներկայացվող նախաձեռնությունների դեպքում, սեփական նախաձեռնություններով և առաջարկներով ՏԻՄ-ը և ծնողական համայնքը հանդես չեն գալիս:
		Բավարար	Սահմանափակ համագործակցություն ՏԻՄ-ի և ծնողական համայնքի հետ, այն մեծ մասամբ կրում է ձևական բնույթ, Դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում ծնողների մասնակցությունը դիտվում է պարզապես երեխաների հաճախումը դպրոց ապահովելով:
		անբավարար	Դպրոցի և ՏԻՄ ու ծնողական համայնքի հետ համագործակցություն առկա չէ:
8.	Արտադպրոցական և երկարօրյա ուսուցման կազմակերպում	գերազանց	Արտադպրոցական ուսուցումը ուսումնադաստիարակչական աշխատանքների անբաժանելի մասն է կազմում, Դպրոցում կատարվում է հաճախակի՝ սովորողների սոցիալական, ինքնասպասարկման, ինտելեկտուալ հմտությունների զարգացման, հոգևոր,

			գեղագիտական, բնապահպանական, հայրենասիրական գիտելիքների ձեռքբերման նպատակով: Դպրոցն ունի երկարօյա ուսուցում իրականացնելու բոլոր հնարավորությունները՝ ելնելով սովորողների կարիքներից:
		լավ	Արտադպրոցական ուսուցումը Դպրոցում իրականցվում է պարբերաբար՝ ընդգրկելով մեկ կամ երկու ուղղություններ, որոնք ժամանակի ընթացքում դառնում են միօրինակ: Երկաօրյա ուսուցում իրականացնելու հնարավորությունները չեն համապատասխանում սովորողների և ծնողների կարիքներին:
		բավարար	Արտադպրոցական աշխատանքներ կազմակերպվում են հազվադեպ, Դպրոցն ապահովված չէ երկարօրյա ուսուցմաննվազագույն հնարավորություններով:
		անբավարար	Դպրոցում արտադպրոցական աշխատանքներ չեն կազմակերպվում, երկարօրյա ուսուցում չի իրականացվում՝ հնարավորությունների իսպառ բացակայության պատճառով:
9.	Դպոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելում	Գերազանց	Դպրոցում լիարժեքորեն ապահովված է հոգեբանական անվտանգ միջավայր, բարոյահոգեբանական առողջ հարաբերություններ (սովորող-սովորող, սովորող-ուսուցիչ, աշխատակազմ) բացառված են հալածանքի, օտարման, բռնության դեպքերը, Դպրոցն ունի բուլինգի դեպքերի կանխման հստակ

			մշակված քայլաշար, որտեղ ներգրավված են ծնողները, աշխատակիցները, իրավապահ մարմինների ներկայացուցիչները
		Լավ	Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության դեպքեր հազվադեպ են լինում, դրանց պատճառների բացահայտումն ու կանխարգելումը կատարվում է արագ և արդյունավետ, կա դրանց կրկնությունը կանխարգելող մշակված ծրագիր
		Բավարար	Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության դեպքեր գրանցվում են, առկա է բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտ, հալածանքի, օտարման և բռնության դեպքերը կանխող գործողությունները արդյունք չեն տալիս
		անբավարար	Դպրոցում մշտապես գրանցվում են հալածանքի, օտարման և բռնության դեպքեր, դրանց կանխարգելման համար ոչ մի գործողություն չի արվում, տիրում է բարոյահոգեբանակն ճնշող իրավիճակ:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռիսկերը ցանկացած նպատակադրման իրականացումը խոչընդոտող հնարավոր անցանկալի գործոններն են: Ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ դպրոցում, ընդհանրապես փոփոխություններին ուղղված ցանկացած գործողություններ (միջոցառումներ) կապված են ռիսկերի հետ: Այն ռիսկերը, որոնք իրականություն են դառնում, կարող են հանգեցնել դպրոցի զարգացման որևէ ուղղությամբ պլանավորված մտադրությունների տապալման ը: Առանձնահատուկ ուշադրություն

պետք է դարձնել ռիսկային գործոնները չեզոքացնելու վրա՝ նպատակ ունենալով ծրագրված գործողությունների լիարժեք կատարում:

Ռիսկեր	Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողություններ
1. Համայնքից դեպի քաղաք հաստատվելու մեծ ձգտում, աշակերտների թվի նվազում	1.Ծնողների, համայնքի բնակիչների շրջանում գյուղի դերի կարևորության ներկայացում, ինքնագիտակցության բարձրացում
2. Նորամուծությունների մերժում 3. Մշակութային կարծրատիպեր	2.Մանկավարժներին ընդգրկել տարբեր վերապատրաստումների՝ մասնագիտական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով: 3.Պահպանելով հինը՝ ներմուծել նորը՝ կոտրելով կարծրատիպերը
4. Ծնող-աշակերտ-ուսուցիչ համագործակցության պասիվություն: 5. Մոտիվացիայի ցածր մակարդակ	4.Սեմինարների,քննարկումների, հանդիպումների կազմակերպում, որոնց արդյունքում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը կդառնա ավելի դյուրին: 5.Խրախուսել ուսուցիչների ձեռքբերումներն ու հաջողությունները: Ստեղծել պայմաններ՝ ավելի հաճելի և

	արդյունավետ դասեր պատրաստելու համար:
6. Խորհրդի որոշ անդամների ձեռնպահ վերաբերմունք քննարկվող հարցերի վերաբերյալ	6.Խորհրդի անդամների հետ անհատական աշխատանք, նրանց միջև բազմակարծության մթնոլորտի ձևավորում
7. Ուսուցչի և դպրոցի նկատմամբ սխալ ձևավորված կարծրատիպեր հասարակության շրջանում	7.Ուսուցիչների բարեվարքության կանոնների կիրառում
8. Բուլինգի դեպքեր դպրոցում	8.Հալածանքի բացառում, բազմակարծության մթնոլորտի ապահովում
9. Վտանգավոր համակարգչային խաղեր	9.Սոցիալ-հոգեբանական աջակցություն
10. Հովանավորների կողմից ներդրումներ կատարելու մոտիվացիայի պակաս	10.Իրավիճակի ճիշտ և պատճառաբանված ներկայացում
11. Աշխատակիցների կողմից իրենց տրված ինքնագնահատականի սուբյեկտիվություն	11.Ինքնագնահատման հարցաշարերի լրացնելուց հետո հիմնավորված եզրակացություններ
12. Կրթության նկատմամբ ոչ հետևողական վերաբերմունք, ուսումնառության արդյունքների նկատմամբ սովորողների, ծնողների անտարբերություն	12.Գնահատման արդյունքների վերաբերյալ ծրագրերի կազմում, երկաօրյա ուսուցման կազմակերպում
13. Արտակարգ իրավիճակներով	13. Վերապատրաստումների

պայմանավորված առցանց կրթություն, աշակերտների կողմից ՏՀՏ ծրագրերի ուսումնական և ժամանցային նպատակներով օգտագործման տարբերակման կարողության թույլ մշակույթ	կազմակերպում ՏՀՏ ոլորտի վերաբերյալ ուսուցիչների և աշակերտների շրջանում
14. Ֆինանսներ	6. Գտնել ֆինանսական աղբյուրներ, հովանավորներ, բարերաներ

Զարգացման ծրագրի իրականացման գործընթացի համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

- Ֆինանսական միջոցներ
- Նվիրատվություններ
- Դրամաշնորհներ
- Բարերարներ
- Հովանավորներ
- Լաբորատոր սարքավորումներ և նյութեր
- Դիդակտիկ պարագաներ
- Զարգացնող խաղեր և լրացուցիչ գրականություն
- Ժամանակակից տեխնիկա

Դպրոցի զարգացման ծրագրի նպատակների իրականացման համար անհրաժեշտ են համապատասխան միջոցներ, նյութտեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ: Դպրոցում առկա միջոցներն ու հնարավորությունները ներկայացված են ծրագրի իրավիճակային վերլուծության հատվածում՝ ուժեղ և թույլ կողմերի նկարագրությամբ:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ

	ՊԱՐԱԳԱՆԵՐ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
1.Չափորոշչային պահանջներին լիարժեքորեն համապատասխան կրթության որակ 2. Նորարար, նախաձեռնող, անընդհատ ինքնազարգացման ձգտող մանկավարժական համակազմ	Մանկավարժական համակազմի ավելացում, վերապատրաստումների համար նախատեսվող գումար Համագործակցություն այլ դպրոցների փորձառու ուսուցիչների հետ Համակարգված դասալսումների ժամանակացույց
3.Նյութատեխնիկական բազա	Նյութատեխնիկական պարագաների ձեռքբերում բյուջե
4.Արդյունավետ հանագործակցություն դպրոցի հետ սերտ առնչություն ունեցող կառույցների, շահառու կազմակերպությունների, համայնքի և ծնողների հետ:	Կառավարման խորհրդի անդամների ոլորտային կապերի օգտագործում ի շահ Դպրոցի Ծնողների հետ անմիջական սերտ համագործակցություն
5.Ուսումնական հաստատության չափանիշներին համապատասխանող միջավայր ✓ Առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ վարչական, մանկավարժական, աշակերտական միջավայրում ✓ Կրթական միջավայր, որտեղ բացառվում են բուլինգի դեպքերը ✓ Աննվտանգ, հարմարեցված միջավայր աշակերտների, այդ թվում ԿԱՊԿՈՒ երեխաների համար ✓ Բազմակարծության, մարդկային բարձր արժեքների, սոցիլական արդարության միջավայր	Թիմային աշխատանք բոլոր աշխատակիցներով՝ փոխադարձ հարգանքի միջավայրում Հմագործակցված շարունակակն վերապատրաստումներ, սեմինարների, վեբինարների մասնակցություն Համագործակցություն Շիրակի ՏՄԱԿ-ի աշխատակիցների հետ:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մեր կողմից զարգացման ծրագրում նախատեսված միջոցառումների բարեհաջող կատարման արդյունքում ակնկալվում է, որ դպրոցում՝

1. Յուրաքանչյուր սովորողի կտրամադրվի ժամանակակից և որակյալ կրթություն

2. Կավելանա առանձին սովորողների մոտ գրանցվող հաջողությունների թիվը

3. Կբարելավվի ուսուցիչների մասնագիտական և նախաձեռնողական որակները

4. Կձևավորվի հոգաբարձուների խորհուրդ

5.կավելանա աշակերտների առողջության պահպանմանը նպաստող նախապայմանները,

6.Կակտիվանա համագործակցությունը խորհրդակցական մարմինների և կառավարման խորհրդի միջև

7. ՏՀՏ միջոցների լիարժեք ներդրում և կիրառում դասապրոցեսում

8. Նյութատեխնիկական բազայի հարստացման արդյունքում կկազմակերպվեն հետաքրքիր և արդյունավետ դասեր, և այդ կրթական միջավայրում կգերակշռի ուսուցիչների և սովորողների մոտիվացվածությունը

9. Սովորողների մոտ կզարգանան սոցիալականացման և անձի զարգացման հմտությունները՝ գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին համապատասխան

10. Կմեծանա դպրոցի և կրթության նկատմամբ յուրաքանչյուր սովորողի և իր ընտանիքի վերաբերմունքն ու պատասխանատվության զգացումը:

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է կառավարման խորհուրդը՝ տարեկան առնվազն երկու անգամ, կիսամյակների ավարտին հաշվետվության միջոցով, որը ներառում է ամբողջական տեղեկատվություն յուրաքանչյուր գործողության իրականցման ուղղությամբ կատարված աշխատանքների կատարողականների վերաբերյալ: Նախատեսված գործողությունների չկատարման կամ թերի կատարման դեպքում հաշվետվությունում ընդգրկվում են նաև թերացումների պատճառների վերաբերյալ տեղեկատվություն: Տարեկան հաշվետվությունը ներառում է նաև զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվություն:

Վերահսկողությունն իրականացվում է գնահատման չափորոշիչների հիման վրա:

Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշների և պահանջների սխեմայում բաց են թողնված կատարված աշխատանքների նկարագրություն, սահմանված ժամկետում միջոցառման գործողության չկատարման կամ մասնակի կատարման առկայության դեպքու՝ պատճառները, զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկությունները/ , քանի որ այս բաժինները լրացվելու են գործողությունները կատարելուց հետո:

Միջոցառում/գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ
Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության բովանդակություն և որակ		
1.Նոր չափորոշիչների ներդրման համակարգված գործողություններ	Չափորոշչային պահանջներ համապատասխան կարողունակություններով աշակերտներ	2023թ.-ի սեպտեմբերից սկսած
2.Ուսոցչի մասնագիտակն որակների կատարելագործում՝ միասնական, առարկայական թեմատիկ պլանների մշակում, գնահատման նոր չափանիշների լիարժեք կիրառում	Նորարար մանկավարժական կազմ	Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկիզբ
3.Ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների հետ անհատական աշխատանքների կազմակերպում	ԿԱՊԿՈՒ, ուսումնառության մեջ թերացող աշակերտների ուսումնառության ապահովում, վերջնարդյունքներով պայմանավորված նվազագույն կարողունակությունների ապահովում	Ուսումնական տարվա ընթացքում
4.Դասալսումներ, առարկայական միամսյակներ, տնօրինության կողմից տրվող գրավոր աշխատանքներ, ընթերցանության ստուգման աշխատանքներ	Մշտադիտարկումը, արդյունքների բնութագրման գործողությունները լիարժեք ու անաչառ կներկայացնեն իրավիճակը, որն էլ հնարավորություն կտա պլանավորել հետագա աշխատանքները	Դասալսումներ-պարբերաբար Առարկայական միամսյակ-ամիսը մեկ անգամ Տնօրինության կողմից գրավոր աշխատանքներ-յուաքանչյուր կիսամյակի ավարտին Ընթերցանության ստուգման աշխատանքներ-պարբերաբար
5.Դասարանի կառավարման և դասվարի աշխատանքի մշտադիտարկում	Դասարանի բարեվարքության կազմակերպում	Ուսումնական տարվա ընթացքում

6.Դասավանդման ժամանակակից մեթոդների յուրացման և կիրառման նպատակով մասնագիտական վերապատրաստումների կազմակերպում՝ հրավիրված մասնագետների օգնությամբ	ՏՏ ոլորտի նորարարություններին լիարժեքորեն տիրապետող մանկավարժ, արդյունավետ դասեր, առցանց հարթակների ակտիվ կիրառություն	Ուստարվա ընթացքում
7.Ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման գործընթացի շարունակական իրականացում	Չափորոշչային պահանջներին համապատասխանություն, պահանջները կատարող պատրաստակամ ուսուցիչ	Ըստ նախարարության սահմանած ժամանակացույցի
8.Ծնող-դպրոց-ուսուցիչ կապն ամրապնդելու նպատակով պարբերաբար կազմակերպել հանդիպումներ ծնողների հետ՝ յուրաքանչյուրին ցուցաբերելով անհատակն մոտեցում	Բաց համագործակցություն, ծնող-ուսուցիչ-դպրոց փոխադարձ աջակցություն	Ըստ նախապես պլանավորած ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի
9.Բարձրացնել ուսուցիչների մասնագիտական հմտությունները համընդհանուր ներառման շրջանակներում՝ նպաստելով կրթության հավասար պայմանների ապահովմանը	ԿԱՊԿՈՒ սովորողներին մասնագիտական, հոգատար մոտեցում, ներառական կրթության ապահովում	2023-2028
10.Կազմակերպել զրույցներ առողջության, շրջակա միջավայրի պահպանման, քաղաքացիական գիտակցություն ձևավորող, հայրենասիրական թեմաներով	Կրտսեր դպրոցականի ինքնաճանաչողական, քաղաքացիական կարողունակությունների զարգացում	2023-2028
11.Շարունակել ավանդույթ դարձած միջոցառումները	Մշակութային, սոցիալական կարողունակությունների զարգացում	2023-2028
12.Այցելություն մշակութային օջախներ, պատմական վայրեր, թատրոն, կինո՝ ԿԳՄՄՆ աբոնեմենտների ակտիվ օգտագործում	Մշակութային, գեղագիտական կարողունակության զարգացում	2023-2028
13.Քննարկումներ, սեմինարներ, սովորողների, մանկավարժների	Կարգապահ, գիտակից, պատասխանատու	20023-2028

բարեվարքության կանոնների թեմայով	անձնակազմ և աշակերտներ	
Դպրոցի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ		
Միջոցառում/գործողություն	**Ակնկալվող արդյունք**	**Սահմանված ժամկետ**
1.Հասարակական և բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում	Բարեգործական նախաձեռնություններ՝ ի շահ դպրոցի	Ուստարվա ընթացքում
2.Համայնքի հետ համատեղ ծրագրերի իրականացում՝ ծնողների մասնակցությամբ/շաբաթօրյակներ, մշակութային միջոցառումներ, հանդիպումներ համայնքի ներկայացուցիչների հետ/	Դպրոց-համայնք ամուր կապ, համագործակցային միջավայր	2023-2028
Կառավարման և խորհրդակցական մարմիններ		
1.Իրականացնել լիազորությունների և պատասխանատվության բաշխում՝ կառավարման արդյունավետ մոդելի ներդրման նպատակով	Տարեկան աշխատանքային ծրագրով նախատեսված գործողությունների լիարժեք իրականացում	2023-2028
2.Մշտապես կատարելագործել տնօրենի կառավարման կարողությունները՝ ծրագրերի մշակման, ռեսուրսների ներգրավման, վարչական աշխատանքի արդյունավետության բարձրացման և այլ ուղղություններով	Համագործակցող, ժողովրդավար վարչական կազմ, բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտ	Ուստարվա ընթացքում
3.Խորհրդակցական քննարկումներ խորհրդակցական բոլոր մարմինների միջև՝ խնդիների ավելի արագ լուծման նպատակով:	Համագործակցող խորհրդակցական մարմիններ	Ուստարվա ընթացքում
4.Ստեղծել հոգաբարձուների խորհուրդ՝ ներգրավելով Դպրոցի բազում խնդիրների լուծմանը	Դպրոցի բարօրություն	2023թ.

Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ձևավորում		
Միջոցառում/գործողություն	**Ակնկալվող արդյունք**	**Սահմանված ժամկետ**
1.Բազմակարծիք, ներառական, մասնակցային բնույթի հանդիպումներ, քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ. Կազմակերպել զրույցներ, տարբեր հոլովակների դիտումներ հայրենիքի, ընտանիքի, բռնության, ֆիզիկական և հոգեբանական ճնշման, իրավունքների հավասարության, հանդուրժողականության, անվտանգության, առողջ ապրելակերպի, վնասակար սովորությունների, գրքի կարևորության, սոցիալական ցանցերի վտանգների թեմաներով	Դպրոցում բարձր արժեքային համակարգի հաստատում,	2023թվականից սկսած
2.Ներառական կրթության գլխավոր խնդիրը դարձնել անձի սոցիալիզացիան Ուշադրություն դարձնել ԿԱՊԿՈՒ սովորողների խնդիրներին՝ գտնելով համարժեք լուծումներ	Համընդհանուր ներառման ապահովում	2023-2028
Ֆինանսատնտեսական գործունեություն		
Միջոցառում/գործողություն	**Ակնկալվող արդյունք**	**Սահմանված ժամկետ**
1.Պլանավորել գնումների կազմակերպման և բյուջեյի բաժխման գործընթացը	Ճիշտ պլանավորված վարչարարություն՝ ի նպաստ կրթության որակի	2023-2028
2.Ֆինանսական միջոցների նպատակային օգտագործում	Ճիշտ պլանավորված վարչարարություն՝ ի նպաստ կրթության որակի	2023-2028
3.Նվազագույնի հասցնել նախատեսված բյուջեի փաստացի շեղումներ ծավալը	Հաստատուն բյուջե, կրեդիտորական պարտքի բացառում	2023-2028

Հավելված

ՀՀ
ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԻ
«ՁԱՅՈՒՄԻ ԿԱՅԱՐԱՆԻ
ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊՈՒՄԿ

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ